Azg
Ազգ
3 ՅՈՒԼԻՍ 2004 ՇԱԲԱԹ 123 (3045)

Հայաստանի ազգային գրադարան
դամանակ

Հարավային Օսիան «պատրաստ է հեռ մղելու Վրաստանի հարձակումը»

Հարավային Օսիայի զորքերը բերված են լիակատար մարտավիճակի եւ «պատրաստ են հեռ մղելու Վրաստանի ամեն մի հարձակում»: Այդ մասին երեկ հայտարարել է Հարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտին: «Վրաստանի ղեկավարությունը վերջնականապես որոշել է մեր հանրապետության խնդիրը լուծել ուժային միջոցներով: Մեզ հայտնի է, որ ուժային գործողությունն սկսվելու է հուլիսի 7-9-ը», ասել է նախագահը, ավելացնելով, որ, իր տվյալներով, գործողությունը ղեկավարելու է վրաց գեներալ Թաթուխաբվիլին:

Կոկոյտիի խոսքերով, ներկայումս Հարավային Օսիայի սահմանների մոտ արդեն կուտակված են 2,5-3 հազար վրացի զինծառայողներ, որոնց թիվը շարունակում է աճել: Նախագահը նշել է, որ Աբխազիայի սահմանից Հարավային Օսիայի մերձակա շրջաններ են բերվել վրացական «Սոֆիակ լեգեոն» եւ «Անցառային եղբայրներ» ահաբեկչական կազմակերպությունների բազմաթիվ անդամներ, որոնք պետք է մի շարք սադրանքներ կազմակերպեն Հարավային Օսիայի տարածքում:

Նաեւ հաղորդվում է, որ Հարավային Օսիայի վրացաբնակ սահմանամերձ գյուղեր են բերվել Թելավիի զինվորական ուսումնարանի 70 կուրսանտներ:

Հայ-թուրքական հարաբերություններում Ղարաբաղի խնդիրը երկրորդական է

ՍԾՏՀ-ում ՀՀ ներկայացուցիչ Արսեն Ավագյանը կարծում է, որ Էրդողանի կառավարության դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ համեմատաբար քարենպաստ է

ԹԱԹՈՒԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
Սամբուլ-Երեւան

- Պրն Ավագյան, դուք ներկայացնում եք Հայաստանը Սեւծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպությունում, որին անդամակցում են նաեւ Թուրքիան եւ Ադրբեջանը: Առաջինի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հարաբերություններ, թուրքական կողմը շարունակում է շրջափակել Հայաստանը, երկրորդի հետ, ըստ էության, պատերազմի մեջ է: Ինչպե՞ս է հաջողվում Հայաստանին ներգրավվել այս կազմակերպությունում՝ ունենալով նման երկու հարեւաններ:

- Հայաստանի ջանքերը՝ թույլ չտալ ՍԾՏՀ-ն վերածել քաղաքական կազմակերպության, ըմբռնումով են ընդունում անդամ մյուս պետությունները եւ ակտիվորեն պաշտպանում են: Վերջին հանդիպումների ժամանակ, երբ ընդունվում էր սեւծովյան տարածաշրջանում անվտանգության հայտարարությունը, Ադրբեջանի ջանքերը՝ հայտարարության մեջ մտցնելու «ագրեսիվ անջատողականություն» արտահայտությունն անդամ մյուս պետություններին համոզելու լոբի ընդդիմությունն առաջացրին, այդ թվում նաեւ Թուրքիայի: Այսինքն՝ Հայաստանին հաջողվում է այս կազմակերպությունում պահպանել տնտեսական ձեւաչափը, քանի որ մյուս երկրները եւս չեն ուզում, որ ՍԾՏՀ-ն վերածվի քաղաքական կազմակերպության: Անշուշտ, Թուրքիայի հետ հարաբերությունների բացակայությունը եւ Ադրբեջանի հետ ունեցած բարդություններն անդրադառնում են տարածաշրջանային համագործակցության ծրագրերի վրա:

- Դուք արդեն երկու տարի ներկայացուցիչ եք Սամբուլում եւ, բնականաբար, հետեւում եք հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանը, ընդ որում՝ ներսից: Ձեր կարծիքով, ի՞նչ է փոխվել վերջին երկու տարիներին Երեւան-Անկարա հարաբերություններում իսլամիստների իշխանության գալով:

Տես էջ 3

ՀՈՒԼԻՍԻ 6-7-Ը

Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարները կքննարկեն Ղարաբաղյան թեման

ԵՐԵՎԱՆ, 2 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԻՆՖՈ: ՌԴ եւ Հայաստանի արտգործնախարարների բանակցությունների ընթացքում կքննարկվեն ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն առնչվող հարցեր: Այդ մասին հաղորդեցին ՌԴ ԱԳՆ տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտից: Հիշեցնենք, որ Հայաստանի արտգործնախարարի այցը Մոսկվա տեղի կունենա ընթացիկ տարվա հուլիսի 6-7: Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի Ղարաբաղյան խնդրի վրա: «Ելնում ենք այն դրույթից, որ հակամարտության մասնակիցները պետք է ինքնուրույն գտնեն տվյալ խնդրի փոխընդունելի եւ փոխզիջումային տարբերակը», նշել են դեպարտամենտում: Աղբյուրի համաձայն, Ռուսաստանը պատրաստ է աջակցել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին եւ դառնալ կողմերի միջեւ փոխընդունելի պայմանավորվածության երաշխավորը: Բանակցությունների ընթացքում կքննարկվեն նաեւ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ առեւտրատնտեսական շրջառառությանը, մշակութային եւ հումանիտար համագործակցությանն առնչվող հարցեր: Աղբյուրի համաձայն, միջազգային ասպարեզում երկու երկրների փոխգործակցությունը կարեւոր դեր է կատարում Ռուսաստանի եւ Հայաստանի երկկողմ հարաբերություններում:

Բուշն ու Սաակաշվիլին գլուխ գլխի՝ երկու ժամ

Սամբուլում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովի օրերին տեղի ունեցան երկկողմ բազմաթիվ հանդիպումներ: Պետությունների ղեկավարները հարմար առիթը բաց չէին թողնում զրվելու եւ հիմնականում երկկողմ հարցերի շուրջ զրուցում էին ճաշկերույթների ժամանակ: Ահա, նման ընդունելություններից մեկի ընթացքում ԱՄՆ-ի եւ Վրաստանի նախագահները սեղանի շուրջ զրուցեցին մոտ 2 ժամ, ինչը որոշ երկրների ղեկավարների խանդն առաջացրեց: Այսօր Հարավային Կովկասում Մ. Նահանգների համար ամենաընդունելի առաջնորդը հենց Միխայիլ Սաակաշվիլին է, որի հետ երկու ժամ զրուցեց Ջորջ Բուշը: Նկատենք, որ գագաթաժողովի օրերին Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի նախագահների երկկողմ հանդիպում տեղի չի ունեցել, ինչպես գրվել է հայկական մամուլում: Ճիշտ է, Բուշն ու Իլհամ Ալիեւը հանդիպել են, զրուցել, բայց դա կրկին տեղի է ունեցել ընդունելություններից մեկի ընթացքում:

Բուշն ասում է, որ Թուրքիան ունի ժողովրդավարության 150-ամյա պատմություն

Սամբուլում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովի օրերին Մ. Նահանգների նախագահն առիթը բաց չէր թողնում գովաբանելու Թուրքիային, մասնավորապես ցեղասպանություն իրականացրած այս երկրի ժողովրդավարական նվաճումները: Ջորջ Բուշը համալսարանի ուսանողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան ունի ժողովրդավարության 150-ամյա պատմություն, այսինքն՝ 1850-ական թթ. ի վեր Օսմանյան կայսրությունը եւ նրա իրավահաջորդ թուրքական հանրապետությունը եղել են ժողովրդավար: Զարմանալի է, որ ապրիլի 24-ին իր ամենամյա ուղերձում Բուշը հիշեցնում է մոտ 1,5 մլն հայերի բնաջնջման փաստը Օսմանյան կայսրության մայրամուտին եւ ցավակցում ամերիկահայությանը: Այսինքն՝ ժողովրդավարական երկիր լինելը, Բուշի տրամաբանությամբ, բոլորովին էլ չի խանգարում, որ ցեղասպանություն իրականացվի:

Ծայրահեղականները սպառնում են Եվրոպային

ԼՈՆԴՈՆ, 2 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: «Աբու Հաֆս ալ Մասրիբրիգադ» ծայրահեղական խմբավորումը, որ Մադրիդի ահաբեկչության պատասխանատուն է, հանդես է եկել եվրոպական երկրներին ուղղված նոր սպառնալիքներով:

«Բրիգադի» հայտարարությունը հրապարակվել է Լոնդոնում արաբերեն լույս տեսնող «Աշ Շարք ալ Ավսաթ» թերթում: Նամակում հիշեցվում է, որ բեն Լադենի հայտարարած հրադադարը ավարտվում է հուլիսի 15-ին: Ծայրահեղականները բոլոր մուսուլմաններին կոչ են անում մինչ այդ ժամկետը հեռանալ Եվրոպայից:

«Մենք Եվրոպայի ժողովրդին ասում ենք՝ դուք սոսկ մի քանի օր ունեք, որպեսզի ընդունեք բեն Լադենի պայմանները, կամ սպիտված կլինեք ինքներդ ձեզ մեղադրել ձեզ վիճակվածի համար», ասվում է հայտարարության մեջ:

Ծայրահեղականները վկայաբերում են բեն Լադենի ձայնագրությունը, որ հրապարակվել էր ապրիլի 15-ին, ուր նա հայտարարել էր Եվրոպայի հետ եռամյա «հրադադարի» մասին: Պայմանը Եվրոպական զորքերը մուսուլմանական բոլոր երկրներից դուրս բերելն էր:

Մեր առաջիկա համարը

ՀՀ Սահմանադրության օրվա կապակցությամբ «Ազգը» լույս չի տեսնի հաջորդ օրը՝ երեքշաբթի, հուլիսի 6-ին: Ընթերցողները մեր առաջիկա համարը կստանան չորեքշաբթի օրը, հուլիսի 7-ին: Մինչ այդ շնորհավորում ենք մեր ընթերցողներին Սահմանադրության օրվա առթիվ:

Մահացավ Մարլոն Բրանդոն

ԱՄՆ Նեբրասկա նահանգի Օմահե քաղաքում 1924 թ. ծնված Մարլոն Բրանդոն Բրոդվեյի բեմում հայտնվեց 1944 թ. «Ես հիշում եմ, մայրիկ» սենսիմենտալ ներկայացման մեջ: Արվեստագետին հռչակ բերեց 1947-ին բեմադրված Սթենլի Կովալսկու դերակատարումը «Ցանկություն ունենալ տրամվայը» ներկայացման մեջ: Նույն պիեսի էկրանավորման մեջ Մարլոն Բրանդոն նկարահանվեց 1951 թվականին: Կինոյի ասխարհ մուտք գործելով անցյալ դարի կեսերից՝ Մարլոն Բրանդոն մարմնավորել է հակապես դրամատիկ կերպարներ, որոնցից նշանավոր են «Կեցցե Սապատան», «Վայրենին», «Նավահանգստում» ֆիլմերը, որոնցով դերասանը հռչակ ձեռք բերեց՝ հանդիսանալով ամերիկյան կինոյի առաջատար աստղերից: Անցողիկ եւ թույլ կերպարները խամրեցին նրա ստեղծագործական ճանապարհին, եւ Բրանդոն կինոարվեստում մնաց իբրեւ լավագույն մեկնաբանը բարդ, հոգեբանական խորունկ կերպարների: Դերասանական վարպետության ամենաբարձր դրսեւորումները Ֆրենսիս Ֆորդ Կոպոլայի «Կնքահայրը» եւ «Մեռոյա Հայտնությունը», Բերնարդո Բերտոլուչչիի «Վերջին տանգո Փարիզում», «Դոկտոր Մորոյի կղզին» եւ այլ ֆիլմերում՝ մնացին իբրեւ համաշխարհային կինեմատոգրաֆիայի մնայուն արժեքներ:

Երեկ Լոս անջելեսի հիվանդանոցներից մեկում Բրանդոն ավանդեց իր հոգին Մինչեւ վերջերս նա ապրում էր խաղաղօվկիանյան կղզիներից մեկում՝ գնված 1962 թ. «Խռովություն «Բաունթիի» վրա» ֆիլմի նկարահանումներից հետո:

Մ. Բ.

ՏՈՒՐ ԲՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեւանի ճարտարապետական տեսքն այլեւս չի հրապուրում օտարներին

Որովհետեւ շատանում են եվրոպական միջակ քաղաքներին բնորոշ կառույցները

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Երեւանի գլխավոր ճարտարապետ նշանակելիս նախկինում միշտ հաշվի է առնվել Հայաստանի ճարտարապետների միության կարծիքը, սակայն վերջին գլխավոր ճարտարապետից հետո այս ավանդույթը կարծես խախտվել է, որովհետեւ առ այսօր միության նախագահ Մկրտիչ Մինասյանից որեւէ թեկնածուի մասին կարծիք չեն հարցրել: Նա դժվարանում է ասել, թե ո՞վ կնշանակվի Երեւանի գլխավոր ճարտարապետի թափուր պաշտոնում, եւ առանձնապես վիրավորված չի զգում միության կարծիքը հաշվի չառնելուց, որովհետեւ, ինչպես ասում են, աչքը տեսածից է վախենում, եւ եթե իրենց պաշտպանած թեկնածուն հետագայում վատ ասխատի, դրա մեղքի բաժինը ենթադրաբար նաեւ իրենցն է լինելու:

«Ցեմ կարծում, որ նոր ճարտարապետի գալով ամեն ինչ փոխվելու է: Նախկինը լավ ծրագրերով սկսեց, սակայն հետեւողական չեղավ հասարակական տարածքները պահպանելու կարեւոր հարցում, նրա կարը հասարակության հետ իրականում չկայացավ:

Տես էջ 3

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ-ում ընտրությունները միանգամայն օրինական են

Այս տարվա օգոստոսի 8-ին ԼՂՀ-ում կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների կապակցությամբ Ադրբեջանն ակտիվ հակաքարոզչություն է սկսել՝ դրանք տարբեր երկրների եւ միջազգային կազմակերպությունների կողմից դատապարտելու նպատակադրությամբ: Հարեւան երկրի քարոզչամեքենան փորձում է միջազգային հանրությանը համոզել, թե Ղարաբաղում ընտրությունները չեն կարող համարվել օրինական, քանի որ հակասում են միջազգային իրավունքի նորմերին: Նրանց այս մոտեցման հիմքն այն է, որ իբր հակառակ Ադրբեջանի ազգային օրենսդրության՝ ընտրությունները Ղարաբաղում անցկացվում են առանց Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի բնակչության մասնակցության:

Այս կապակցությամբ օրերս հայտարարությամբ հանդես է եկել ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը, որում ադրբեջանական կողմի դիրքորոշումը խիստ կտրված է համարում առկա իրողություններից: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որ ահա արդեն 16 տարի ապրում է Ադրբեջանից անկախ եւ ինքնուրույն է կազմակերպում իր կյանքը սեփական պետական տարածքում, ոչ մի կապ չունի նրա օրենսդրության հետ, հետեւաբար, նման կարգի հղումները միանգամայն անհիմն են», նշվում է հայտարարության մեջ:

Միեւնույն ժամանակ ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը ուշադրություն է հրավիրում ադրբեջանական իշխանությունների անտրամաբանական գործողությունների վրա: Մասնավորապես, պաշտոնական Բաքուն միջազգային կազմակերպությունների ամբիոններից Լեռնային Ղարաբաղն անվանելով չվերահսկվող տարածք՝ դատապարտում է ընտրությունների անցկացման եւ դրանց հիման վրա իշխանության ու կառավարման օրինական մարմինների ձեւավորման բուն փաստը: Ինչ վերաբերում է ընտրություններին ԼՂՀ ադրբեջանական բնակչության չմասնակցելուն, ապա այս տրամաբանությամբ հարկ է անվավեր ճանաչել Ադրբեջանում անցկացված բոլոր ընտրությունները, քանի որ էթնիկ զտումների հետեւանքով հարյուր հազարավոր հայ քաղաքացիներ են վտարվել այս երկրից:

ԼՂՀ արտգործնախարարության մամուլի ծառայությունը նաեւ համոզմունք է հայտնում, որ ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների օգոստոսի 8-ին կայանալիք ընտրությունները, ինչպես նաեւ հանրապետության բոլոր մակարդակների իշխանության մարմինների նախորդ ընտրությունները համահունչ են միջազգային չափանիշներին, եւ Լեռնային Ղարաբաղում ու տարածաշրջանի մյուս երկրներում ժողովրդավարական գործընթացների զարգացումն ու խորացումը թույլ կտան պայմաններ ստեղծել ամբողջ Հարավային Կովկասում երկարատեւ խաղաղության եւ կայունության հաստատման համար:

ԿԻՄ ՂԱԼԲԻՆԵԱՆ

Ստեփանակերտ

Ռաչիդ Նուրդալիեւ. «Մենք չենք բաժանում հանցավոր խմբավորումները ըստ ազգային հատկանիշի»

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ԻՐԱՎԱՊԱՀԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, 2 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հանցավորության սպառնալիքի աստիճանը չի կարելի գնահատել ազգային հատկանիշով. չի կարելի ասել, թե ինչ-որ լուրջ սպառնալիք կա, օրինակ, Ռուսաստանում գործող զուտ հայկական հանցավոր խմբավորման կողմից: Այս մասին հայտարարեց ՌԴ ներքին գործերի նախարար Ռաչիդ Նուրդալիեւը Հայաստանի եւ Ռուսաստանի իրավապահների միացյալ կոլեգիայի նիստին հաջորդած հուլիսի 2-ի ասուլիսին: «Մենք չենք բաժանում հանցավոր խմբավորումներ ըստ ազգային հատկանիշի, մեր գլխավոր խնդիրն է համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնել: Դա հնարավորություն է տալիս արագ տեղայնացնել իրավիճակը, ամենակարճատը, վաղ շրջանում հանցավոր ընկերակցությունից հեռացնել այն ներկայացուցիչներին, որոնք ինչ-ինչ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով հայտնվել են այդ ընկերակցությունում»,- ընդգծեց ՌԴ ՆԳ նախարարը, նշելով, որ Ռուսաստանի տարածքում 5 հանցավոր ընկերակցություններ կան, որոնց կառուցվածքում ղեկավար դիրք են զբաղեցնում Հայաստանի ներկայացուցիչները:

Ի պատասխան ռուսաստանցի լրագրողի հարցի, նա պարզաբանեց, որ գործնականում խմբավորումների ղեկավարները տարբեր ազգության են, եւ նրանք փորձում են հանցավոր գործունեության մեջ ներքաշել իրենց ազգակիցներին: Ռուսաստանում կան նաեւ խառը հանցավոր խմբավորումներ՝ ռուսների, վրացիների, ինգուշների, հայերի, ադրբեջանցիների, ուկրաինացիների մասնակցությամբ:

Որպես Հայաստանի եւ Ռուսաստանի իրավապահների փոխգործակցության հաջողված օրինակ ՌԴ ներքին գործերի նախարարը հիշատակեց հունիսի 24-ի գործողությունը, որի արդյունքում կանխվել է հանցավոր խմբավորման գործունեությունը: Այն անմիջականորեն ՀՀ-ում զբաղվում էր երիտասարդ աղջիկների հավաքագրմամբ, որոնք տեղափոխվում էին Մոսկվա, փաստաթղթեր էին պատրաստվում, ապա աղջիկները տեղափոխվում էին Արաբական Միացյալ Էմիրություններ՝ պոռնկությամբ զբաղվելու: Անմիջապես գործողության արդյունքում ազատվել են 6 աղջիկներ, իսկ ընդհանուր առմամբ կանխվել է ավելի քան 100 աղջկա «արտահանումը»: Նախարարը նշեց, որ նշված գործունեությունը բահուքաբեր է, չունի սահմաններ, ամեն մասնակից յուրաքանչյուր աղջկա համար ստանում էր 2,5-հազարական ԱՄՆ դոլար:

ՀՀ ոստիկանության պետ Հայկ Հարությունյանը եւ Ռաչիդ Նուրդալիեւը:

Չինական տրակտորները կվաճառվեն սահմանամերձ եւ լեռնային գոտու տնտեսություններին

ԵՐԵՎԱՆ, 2 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Չինաստանի կառավարության հատկացրած 5 մլն յուանի (մոտ 600 հազ. ԱՄՆ դոլար) դրամաշնորհով ձեռք բերված գյուղգործիքներով համալրված 51 տրակտորը հիմնականում աճուրդով կվաճառվի սահմանամերձ եւ լեռնային գոտում գտնվող գյուղացիական տնտեսություններին: Այս մասին հուլիսի 2-ին լրագրողներին հայտնեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը գյուղնախարար Դավիթ Լոիյանի եւ Հայաստանում Չինաստանի դեսպան Զո Սյուեյանի միջեւ տրակտորների փոխանցման փաստաթղթի ստորագրումից հետո: Վարչապետը նշեց, որ գյուղացիական տնտեսությունների զարգացման նպատակով կտրվեն նաեւ որոշակի արտոնություններ. մասնավորապես, աճուրդներին կմասնակցեն նույն տարածաշրջանի գյուղտնտեսությունները: Գյուղական համայնքներում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է նաեւ աճուրդին ընդգրկել համայնքները: Գյուղնախարար Դավիթ Լոիյանը հայտնեց, որ հուլիսի երկրորդ կեսին կազմակերպվելիք աճուրդին մեկ միավորի մեկնարկային գինը կլինի մոտ 3 հազ. ԱՄՆ դոլար, չնայած տրակտորի իրական արժեքը կազմում է մոտ 10 հազ. ԱՄՆ դոլար:

Ըստ Անդրանիկ Մարգարյանի, դրամաշնորհը տրվել է Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ Չինաստանի Կոմկուսի համագործակցության շրջանակներում: Հայ-չինական հարաբերությունները ընթանում են նաեւ քիմիական արդյունաբերությունում: 2001թ.-ին կնքված պայմանագրի համաձայն, «Նաիրիտ 2» ԲԲԸ-ն եւ «Սինթետիկ կաուչուկների Շանսիի խմբային բաժնետիրական ընկերություն»-ը Չինաստանում պետք է կառուցեն ֆլորոպրենային կաուչուկի գործարան: Ներկայումս որոշակի աշխատանքներ են տարվում նաեւ երկու երկրների միջեւ զբոսաշրջիկության զարգացման ուղղությամբ: Վարչապետի խոսքերով, հայ-չինական տնտեսական համագործակցության բնագավառում կան ռեզերվներ:

Ուժեղ ցնցումներ զգացվեցին նաեւ Երեւանում

Նախորդ գիշեր ժամը 3-ն անց 30 րոպեին Թուրքիայի տարածքում, Իգդիր քաղաքից 20 կմ հարավ-արեւմուտք տեղի է ունեցել 3,4 մագնիտուդ ուժգնության երկրաշարժ: Էպիկենտրոնային գոտում գրանցվել է 5 բալ ուժգնություն: Ըստ Ռոյթեր գործակալության, նախնական տվյալներով, զոհվել է 21 եւ մարմնական վնասվածքներ ստացել 50 մարդ: Եղել են նաեւ ավերածություններ: Թուրքիայի երկրաշարժը զգացվել է Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության սեյսմոլոգիական ցանցում: Երկրաշարժը զգացվել է նաեւ Հայաստանում՝ Երեւանում, Վեդիում, Երասխավանում:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետ Ալվարդ Անտոնյանի գնահատմամբ, տարածաշրջանում սեյսմիկ ցնցումների հաճախականությունը նորմայի սահմաններում է՝ նկատի առնելով տարածքի սեյսմակտիվությունը: Այսինքն, մեր տարածաշրջանում երկրակեղեւի նման «ռեժիմի» վարքագիծը նորմալ պիտի ընդունել: Վերջին տարիներին Հայաստանի շուրջը հաճախ են երկրաշարժեր լինում՝ շրջանցելով մեր հանրապետությունը: Սա մշտապես իրական, անշոշափելի վտանգ է, որի մասին եւ իշխանությունները, եւ բնակչությունը ամենից լիքն են մտահոգվում:

Մայրաքաղաքում երկրաշարժից անպաշտպան են հատկապես հարկերի բարձրացման մեթոդով եւ թույլ գրունտի վրա կառուցված տները: Երեւանում արձանագրվել են մոտ 4 բալ ուժգնության ցնցումներ: Շատերին կեսգիշերին քնից արթնացրել են ցնցումները:

Ա. Ղ.

Ոստիկանները «դագաղն» ու «հանգուցյալին» տարել ու դեռ չեն վերադարձրել

«Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորումը դիմում է հղել ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանին, պահանջելով պաշտպանել այն ոստիկաններին, որոնք հուլիսի 1-ին Մաշտեցաղարանի մոտ կազմակերպված միտինգից առաջ տարել էին սոցքարտերը «թաղելու» համար պատրաստված «հուղարկավորության դագաղն» ու «հանգուցյալի» (սոցիալական ապահովության քարտի) մեծադիր նկարը՝ ոսկեզօծ շրջանակով:

Հիշյալ գույքն անհապաղ չվերադարձնելու դեպքում միավորումը ստիպված կլինի ներկայացնել քաղաքացիական հայց՝ նյութական ու բարոյական պահանջով:

Հունիսին բանջարեղենն էժանացել է, միրգը՝ թանկացել

ԵՐԵՎԱՆ, 2 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ընթացիկ տարվա մայիսին բանջարեղենի եւ կարտոֆիլի ապրանքախմբում գրանցված 11.8 տոկոս գնաճին հունիսին հաջորդել է 9.4 տոկոս գնանկում: Նշված ժամանակահատվածում կանաչ սոխի, սխտորի, սմբուկի գները նվազել են 9.3-0.3 տոկոս, իսկ ճակնդեղի, գազարի, կարտոֆիլի ու կաղամբի գներն աճել են 13.6-45.8 տոկոս:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, դիտարկված 6 քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի եւ կարտոֆիլի 27.2-9.3 տոկոս գնանկում, համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Վանաձորում, իսկ մնացած չորսում նկատվել է 17.8-36.4 տոկոս գնաճ: Երեւանում հունիսին բանջարեղենի եւ կարտոֆիլի գնանկումը 9.3 տոկոս է կազմել: Մրգի ապրանքախմբում մարս-հունիսին գրանցվել է 39.5 տոկոս ընդհանուր գնաճ, միայն հունիսին՝ 19.3 տոկոս: Գների աճը հիմնականում պայմանավորված է սեզոնայնությամբ եւ մի քանի մրգատեսակների՝ խնձորի (36.1 տոկոս), տանձի (29.6 տոկոս) գնաճով: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում մրգի գնաճը կազմել է 6-39.8 տոկոս: Համեմատաբար բարձր է եղել Վանաձորում, որին հակառակ, եղեգնաձոր քաղաքում գրանցվել է 2.1 տոկոս գնանկում: Երեւանում միրգը թանկացել է 15.8 տոկոսով:

Նոյյան տապանը փնտրելու համար Արարատ կբարձրանա ռուսական արշավախումբ

ՄՈՍԿՎԱ, 2 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 15-ին դեպի Արարատ լեռ կուղեւորվի ռուսական արշավախումբ Նոյյան տապանը գտնելու նպատակով: Ըստ արշավախմբի կազմակերպիչ արեւելագետ Անդրեյ Պոլյակովի, առաջին արշավի ժամանակ, որ կայացել է անցած տարի, ռուս հետազոտողները Արարատի վրա նկարահանել են հինավուրց վիթխարի նավ, որ չափերով համընկնում է տապանին: Նրանք բերել էին արձանագրությունների եւ նկարների լուսանկարներ, որոնք հայտնաբերել էին կիսալքված հայկական գերեզմանատան շիրմաքարերին: Պարզվել է, որ այնտեղ գրված է գոյատեւման յուրատեսակ հրահանգ Նոյի համար: Պոլյակովը վստահ է, որ եղել է երկու տապան՝ մեկով նավարկել է Նոյը, մյուսը՝ դատարկ, նա տեսել է ծովում: Ուսումնասիրողները գտել են հենց երկրորդ նավի մնացորդները: Ինչպես հաղորդում է «Ռոսսիան», իսկական տապանի հայտնաբերման բարդությունները պայմանավորված են նրանով, որ Արարատ լեռը գտնվում է ներկայիս Թուրքիայի տարածքում, որտեղ տեղավորված են ռազմական օբյեկտներ: Այդ պատճառով զբոսաշրջիկների համար մատչելի է լեռան հարավային լանջը: Այս անգամ ռուսական արշավախումբը ձեռք է բերել թույլտվություն ուսումնասիրելու Արարատի մյուս լանջը: Անդրեյ Պոլյակովի կարծիքով, հենց այնտեղ է իսկական Նոյյան տապանը: Անկախ արշավախմբի արդյունքներից, հետազոտությունների ընթացքի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը կհեռարձակվի իրական ժամանակի մեջ «Ռամբլեր Տելեսեթ» ցանցով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ՀԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հանձնարարատվության ծառայություն / հեռ. 582483
Տուրքերյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հանձնարարչային բաժանորդագրումներ
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական եւ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրատոր համաձայնության խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Անբարեխիղճ մրցակցություն օղու շուկայում

Օղու շուկայում անբարեխիղճ մրցակցության մի շարք դրսեւորումներ երեկ ֆնարկվեցին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովում: Մասնավորապես նման գործունեություն էին իրականացրել 9 տնտեսվարողներ:

«Սուրմալու-1» ընկերության «Սարայա Մոսկվա» եւ «Գորելկա», «Գյումրի հաց» ՍՊԸ՝ «Գժելկա», «Գրժելկա» եւ «Յուրի Դոլգորուկի» օղիները շփոթության աստիճան նմանակում են մոսկովյան հանրահայտ «Կրիստալ» գործարանի ապրանքանիշերին: Հանձնաժողովը որոշեց պարտավորեցնել տնտեսվարողներին դադարեցնել այդ օղիների արտադրությունը, վերացնել անբարեխիղճ մրցակցության դրսեւորումները եւ 10 օրվա ընթացքում պետական բյուջե փոխանցել այդ օղիների վաճառքից ստացված շահույթը: Վերոնշյալ ընկերություններից «Գյումրի հաց» ՍՊԸ ներկայացուցիչը հավաստիացրեց, որ այդ անվանումով օղիների արտադրությունն իրենք արդեն դադարեցրել են, ինչն ի գիտություն ընդունվեց հանձնաժողովի կողմից: «Արգիտի» ՍՊԸ-ն նույնպես թողարկել է «Մոսկովսկայա», «Ստոլիչնայա» եւ «Զոլոտոյե կոլցո»՝ «Կրիստալի» ապրանքանիշները նմանակող օղիները, որի առնչությամբ հանձնաժողովը ընդունել է խախտումները վերացնելու պահանջով որոշում:

«Կրիստալ» գործարանի ապրանքանշան է օգտագործել նաեւ «Սոֆտ ալկո» ընկերությունը: Նրա արտադրած «Գժելկա» եւ «Գժիլկա» օղիները նույնպես շփոթեցրել են սպառողներին: Իսկ նույն ընկերության արտադրած «Կուբանսկայա» օղու ապրանքանշանը պատկանում է հոլանդական «Սպիրիտս ինտերնեյշնլ» ընկերությանը:

Հանձնաժողովի նիստում ֆնարկվեց «Ղարիբ» ընկերությանը վերագրվող «Սարայա Մոսկվա» օղու հարցը: Պարզվեց, որ այս օղին ընկերությունը չի արտադրել, այլ պարզապես օգտագործվել է նրա անվանումը: Հանձնաժողովի նախագահ Ֆելիքս Փիրումյանն առաջարկեց վերոհիշյալ փաստի առնչությամբ դիմել իրավասու մարմիններին՝ հայտնաբերելու համար այն իրական տնտեսվարողին, որն արտադրել է այդ օղին այլ ընկերությունների անվանումն ու ապրանքանշանն օգտագործելով: Այդ առաջարկը հանձնաժողովը հաստատեց:

«Էմիլ եւ Ալեքսանդր» ընկերության «Գրիշկա Ռասպուտին» օղին նմանակում է գերմանական «Ռասպուտին» օղու ապրանքանշանը, իսկ «Երեբունի ալկոյի» «Աբսոլիտը»՝ շվեդական «Աբսոլյուտ» անվանմանը: Առաջինի առնչությամբ հանձնաժողովը որոշեց պարտավորեցնել վերացնել ապրանքանշանի օգտագործմամբ անբարեխիղճ մրցակցության դրսեւորումը, իսկ երկրորդի առնչությամբ՝ անվան օգտագործման հետ կապված օրենքի խախտումը:

Անբարեխիղճ մրցակցության առավել լուրջ խնդիրներ երեկ ունեցավ Պոռշյանի կոնյակի գործարանը, որի «Զոլոտոյե կոլցո» օղու արտադրության դադարեցման վերաբերյալ հանձնաժողովն արդեն մեկ անգամ որոշում կայացրել էր: Մինչդեռ, չնայած ընկերությունը տեղեկացրել էր, որ այդ օղու արտադրությունը դադարեցվել է, իրականում շարունակում է վաճառվել: Հանձնաժողովը հայտնաբերել էր, որ վաճառում գտնվող այս օղու ակցիզային դրոշմանիշը թվագրված է 2004 թ.-ով:

«Արցախ ալկոյի» «Մոսկովսկայա», «Ստոլիչնայա» եւ «Ռուսկայա վոդկա» օղիների առնչությամբ Ֆելիքս Փիրումյանը հայտնեց, որ ինքը զրույց է ունեցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածային կառավարման նախարարի հետ, խոստացել է միջոցառումներ ձեռնարկել անբարեխիղճ մրցակցության դրսեւորումները վերացնելու համար:

Հանձնաժողովի նիստին հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ Ֆելիքս Փիրումյանը նշեց, որ շուկայում մեծ ծավալ են կազմում այլ ընկերությունների ապրանքանշանի օգտագործմամբ արտադրված օղիները: Նրա հավաստմամբ, բանն այնտեղ է հասել, որ որոշ խանութներում առանձին տաղավարում տեղադրված են նմանակված օղիները, մյուս տաղավարում՝ իսկականները:

ԱԲՈՒ ՍՈՒԼԵՅՄԱՆ



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Հայ-թուրքական հարաբերություններում Ղարաբաղի խնդիրը երկրորդական է

Սկիզբը էջ 1

- Ռեջեպ Թայիփ Էրդողանի կուսակցության հաղթանակն ընտրություններում նոյասավոր է Հայաստանի հետ հարաբերություններին մի քանի առումներով: Նախ՝ ձեւավորվել է մի կառավարություն, որը կոալիցիոն չէ, մեծամասնություն ունի խորհրդարանում, որը թույլ է տալիս ավելի հեշտ լուծել խնդիրները: Երկրորդ՝ վճռական է Եվրամիության անդամ դառնալու հարցում: Այս կառավարությունն իրական տրամադրվածություն ունենալով Եվրամիությանը լիիրավ անդամակցության խնդրում, նաեւ հաշվի է առնում, որ Հայաստանի հետ հարաբերությունների խնդիրը կարող է խոչընդոտել ԵՄ-ի հետ հարաբերություններում ժամկետներ սանալու հարցում, կամ կարող է օգտագործվել որոշ եվրոպական երկրների կողմից: Կառավարությունը որոշակիորեն տրամադրվածություն ունի հնարավորության դեպքում Հայաստանի հետ համաձայնության հասնել: Մյուս կողմից, Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման մոտեցումներում կարող եմ ասել, որ Էրդողանի կառավարությունը պահպանում է նախորդ կառավարությունների դիրքորոշումները, առաջին հերթին չի վերացնում նախապայմանները:

Դրա հետ մեկտեղ Էրդողանը հայտարարում է, որ փորձ քայլերով Թուրքիան կարող է ֆնարկել Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման գործընթացը: Արդեն երկու երկրների արտգործնախարարների հանդիպումներ են տեղի ունենում, մի քանի օր առաջ (Վարդան Օսկանյանի եւ Աբդուլլահ Գյուլի միջեւ) նման հանդիպում տեղի ունեցավ: Էրդողանի կառավարության դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ եւ այն մթնոլորտը, որ ստեղծվել է այս կառավարության իշխանության գալով, ավելի բարենպաստ են Հայաստանի համար, քան նախկին կառավարությունները:

- Պրն Ավագյան, Էրդողանի կառավարությունն ավելի շատ է ցանկություն հայտնում հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, մյուս կողմից՝ ռազմավարական հարցերում որեւէ ձեւով չի տարբերվում մյուս կառավարություններից: Այդպես չէ՞:

- Այո, Թուրքիայի դիրքորոշումը Հայաստանի հետ հարաբերությունների հարցում անփոփոխ է: Այսինքն՝ նախ Թուրքիան ուզում է լուծել իր խնդիրները, հետո միայն հաստատել հարաբերություններ: Այդ խնդիրներից են Հայոց ցեղասպանությունը, Թուրքիայի տարածային ամբողջականության խնդիրը, ինչպես նաեւ հայ-ադրբեջանական հարաբերությունները Լեռնային Ղարաբաղի հարցում: Այս տեսակետից Էրդողանի կառավարությունը նախորդներից չի տարբերվում: Տարբերությունն այն է, որ վարչապետի կոալիցիոնն ավելի ամուր դիրքեր ունի Թուրքիայում, ավելի հեշտ կարող է որոշ խնդիրներ լուծել Ազգային ժողովում, մինչդեռ ասել, թե ռազմավարական առումով փոփոխություններ են տեղի ունեցել Թուրքիայի հայկական քաղաքականության մեջ, ճիշտ չէ:

Պարզապես վերջին շրջանում Թուրքիան ավելի շատ հաշվի է առնում տարածաշրջանի կարեւորությունը, հատկապես Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի՝ Եվրամիության «Ընդլայնված Եվրոպա - նոր հարեւաններ» ծրագիրը: Այս իրողությունը Թուրքիային ստիպում է Հայաստանին վերաբերվել տարածաշրջանային կտրվածքով: Իմ կարծիքով, վաղ թե ուշ Թուրքիան պետք է հասկանա, եւ հասարակության մեջ արդեն նման միտումներ կան, որ առանց զիջումների հնարավոր չէ հասնել հարաբերությունների կարգավորման:

- 1991 թ.-ից ի վեր Թուրքիայի կառավարությունները Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման մի քանի նախապայմաններ են նշում՝ չհիշատակել Հայոց ցեղասպանության փաստը, հարարակավ ճանաչել ժամանակակից Թուրքիայի սահմանները, Ղարաբաղի հարցում զիջումների գնալ: Ձեր կարծիքով, այս նախապայմաններից ո՞րն է Թուրքիայի համար առաջնային, որի պատճառով է Անկարան շարունակում Հայաստանի շրջափակումը եւ հրաժարվում հարաբերություններ հաստատել Երեւանի հետ:

- Գտնվելով Ստամբուլում եւ ներսից հետեւելով գործընթացներին, կարող եմ ասել, որ թե՛ թուրք հասարակության, թե՛ կառավարության համար առաջին հերթին կարեւոր են այն նախապայմանները, որոնք անմիջականորեն առնչվում են հայ-թուրքական հարաբերություններին՝ Հայոց ցեղասպանության հարց եւ Թուրքիայի սահմանների ճանաչում: Դրանից հետո է միայն գալիս Լեռնային Ղարաբաղի խնդիրը, որը կարելի է ասել, առաջին երկուսի համեմատ Թուրքիայի համար երկրորդական է:

Երեւանի ճարտարապետական տեսքն այլեւս չի հրապուրում օտարներին

Սկիզբը էջ 1

Դրա համար էլ հասարակության վերահսկողությունը մեզանում անպտղաբեր է դարձել, խոսքի ուժը մի տեսակ կորել է, քանի որ ղեկավարները խորանում են ոչ թե դժգոհությունների ու բողոքների պատճառ դարձած խնդիրների էության մեջ, այլ հասարակությանը մտահոգող խիստ հրատապ հարցերի լուծումն անձնավորում են, ասես մի պատանյայի թվում է, թե տվյալ բողոքն ուղղված է իր անձի եւ ոչ երեւույթի դեմ: Անտեսվում է այն էական հանգամանքը, որ դա ամենից առաջ արվում է մեր քաղաքի համար: Այդքան բողոքներից հետո այգիներում շարունակվում է սրճարանների կառուցումը, առանց հաշվի առնելու, որ դրանք հասարակական տարածքներ են, որոնք չի կարելի ծանրաբեռնել կառույցներով: Աշխարհի ոչ մի քաղաքում այսպիսի բան գոյություն չունի, իսկ մեզ մոտ սրճարանատերը նույնիսկ սեփականության վկայական են ստանում կաղաստրից, հասարակական տարածքները 49 տարվա պայմանագրով տրվում են վարձակալության: Նման բան չի կարելի անել, որովհետեւ դրանք պատկանում են հասարակությանը, նա է դրանց սեփականատերը, մինչդեռ նրանից խլվում են անգամ բակերի տարածքները», ասում է պրն Մինասյանը:

Խոսելով քաղաքի ճարտարապետական տեսքի մասին, նա խոր ափսոսանքով նկատում է, որ «նոր Երեւան» ստեղծողների հայտնագործած ճարտարապետական խայտաբղետ ոճերը քաղաքին զրկում են յուրահատկությունից՝ նրան տալով եվրոպական միջակ քաղաքին բնորոշ տեսք, ինչը, բնականաբար, անհետաքրքրական է զբոսաշրջիկների համար:

«Մենք պարտավոր ենք մեր եզակի ճարտարապետությունը պահել ու զարգացնել, քանի որ համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ մերն իր տեղն ունի որպես ինքնուրույն, վառ ու վճիռ ճարտարապետություն: Այս բնագավառում ուրիշներին նմանակելը, մեղմ ասած, տգիտություն է: Նախկինում ոչ մի կարեւոր նախագիծ առանց ճարտարապետների միության ֆնարկման հաջորդ փուլ չէր անցնում, դրա համար էլ ճարտարապետներն այն ժամանակ ավելի զգոն էին, ավելի պատասխանատու եւ կարողանում էին պաշտպանել ու իրագործել ամեն մի առաջարկ: Այսօր այդպիսի հնարավորություն չկա, եւ ճարտարապետները խնդրողի դերում են հայտնվել: Մեզ դիմում են այն ժամանակ, երբ բանը բանից անցած է լինում:

Այսպես հյուրերի համար մեր քաղաքը կամաց-կամաց կորցնում է իր յուրահատկությունը, քանի որ նրանք կամենում են տեսնել հայկական ճարտարապետության դեմքը, յուրահատկությունն ու ինքնուրույնությունը: Մենք բազմիցս խոսել ենք այս մասին, սակայն այդ հեղեղի դեմն առնել մեզ դեռ չի հաջողվում»:

Մեր քաղաքում գլխավոր ճարտարապետի վրա ճնշումները շատ մեծ են, բավականին դժվար է դրան դիմանալը, բայց պետք է հենվել հասարակական կազմակերպությունների վրա: Դա է ամենալավ միջոցը, երբ գլխավոր ճարտարապետն այլեւս հնարավորություն չունի թելադրողների ու հրամայողների ճիրաններից ազատվելու, նա պետք է դիմի հասարակական կազմակերպություններին, նրանց օգնությամբ հասնելու անթույլատրելի կառույցների արգելմանը:

«Քաղաքը զարգացող օրգանիզմ է, պետք է միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում օգտագործել հասարակությանը պատկանող հատվածները: Ներդնողներն այստեղ տիրանում են քաղաքի ամենակենսրնական հատվածներին, ոչ մեկը դեռ չի ցանկացել տարածք վերցնել նախագծվող բաց թաղամասերում ու կյանք մտցնել այնպիսի մոխրացած տարածքներում, ինչպես Դավիթաշենի կամ դեպի Աշտարակ տանող որոշ հատվածները: Դրանք նախագծված են դարձնելու մեծ բնակելի թաղամասեր՝ իրենց բոլոր կենտրոններով: Իսկ ներդնողները կամենում են հենց քաղաքի ուրսում, եթե թույլ տան հանրապետության հրապարակի մեջտեղում էլ կկառուցեն:

Հիմա էլ լեզվաբանության ինստիտուտի շենքն են ուզում քանդել, որի մի թեւը ժամանակին մտածում էինք բացել, որպեսզի դրսից եկեղեցին երեւա: Մեզ չի հուզում այն հարցը, թե շենքը ոնմ սեփականությունը կդառնա: Մենք կողմ ենք, որ այդ հարցին մոտենան շատ նրբորեն, եթե արագորեն քանդենք, ցույց կտանք, որ պետությունն ինքն է քանդում, ուրեմն սեփականատերն էլ կարող է քանդել:

Այդ շենքը փլուզված ներկայացնելը ճիշտ չէ, դա բավականին ամուր շենք է, պետք չէ քանդել, այլապես դա վարակիչ օրինակ կդառնա եւ կսկսենք քանդել նաեւ մյուս շենքերը:

Այսօր ահավոր բաներ են կատարվում Հրազդանի կիրճում, որից շատ են գոհ դրանք կառուցողները: Այդ գեղեցիկ կիրճի հունի վրա շենքեր կառուցելն ուղղակի հանցագործություն է, ափսոս, որ այս տարվա հեղեղը չտրեց ու չտարավ դրանք: Ուրիշ երկրներում հատուկ այդպիսի արհեստական կիրճեր են ստեղծում, իսկ մենք բնականն ունենք ու չենք կարողանում պահել, կիրճի մի ափից մյուսն արդեն չի երեւում, ամբողջությամբ պարսպապատվել է: Իսկ դա հասարակական տարածք է, ժողովրդին է պատկանում, եթե այնտեղ անբարո տեղեր են կառուցվում, ուրեմն վաղը մեզանից ոչ մեկն իր երեխային այնտեղ այլեւս չի տանի», նկատում է նա, նմանատիպ երեւույթները կանխելու միակ ելքը համարելով այն, որ հասարակությունը կամաց-կամաց պետք է վերադարձնի իրեն պատկանող տարածքները: Դրա համար պետք է պայքարենք բոլորս ու ազատենք մեր քաղաքն ընչաքաղցների անձնականությունից:

Այս շաբաթ լույս աշխարհ եկավ 97 երեխա

Ինչպես տեղեկացանք «Մեդինֆորմի» տրամադրած տեղեկագրից, անցած շաբաթ «Մալաթիա» բժշկական կենտրոնում ծնվել է 9 երեխա՝ 5 աղջիկ եւ 14 տղա: Ամենածանր քաշով տղան եղել է 3 կգ 600 գրամ, 52 սմ հասակով, ամենաթեթեւ քաշով աղջիկը՝ 1 կգ 600 գրամ, 42 սմ հասակով:

Մոր եւ մանկան առողջության պահպանման ԳՀ կենտրոնում գրանցվել է 42 ծնունդ՝ 22 աղջիկ եւ 20 տղա: Ամենածանր աղջիկը կշռել է 4 կգ 500 գրամ եւ ունեցել է 55 սմ հասակ, ամենաթեթեւ տղան կշռել է 1 կգ 430 գրամ, 39 սմ հասակով:

«Երեբունի» բժշկական կենտրոնում ծնվել է 37 մանչուկ՝ 23 տղա եւ 14 աղջիկ: Ամենածանր տղան ունեցել է 4 կգ 200 գրամ քաշ եւ 53 սմ հասակ, իսկ ամենաթեթեւ աղջիկը՝ 1 կգ 800 գրամ, 45 սմ հասակ:

Ճանապարհի սկիզբը

Ծնվել է 1934-ին Թավրիզում (Իրան): Ունեցել է դժվարին մանկություն եւ պատանեկություն. մեծ հայրը մահացել է բանտում, մայրը մահացել է, երբ ինքը հազիվ 6 տարեկան է եղել, հայրը զգացմունքներով նաեւ ֆիզիկապես հեռու է եղել իրենից: Մեծացել է (իրոք հեռ) բացառապես մեծ մոր հոգածության ներքո, որը չնայած գրագետ չի եղել, բայց կարողացել է առասպելների եւ կախարդական պատմվածքների հիման վրա նրա մեջ սերմանել արժանապատվություն եւ ազնվություն: Այն, ինչ մնում է մարդկանցից հետո, «բարի անունն ու լավ գործն է» պատգամել է նա:

Սան Ֆրանցիսկոյի պետական քոլեջում: 1969-ին հրատարակում է «Արդի Աֆղանստանի գոյառումը: Բարեփոխումների եւ արդիականացման քաղաքականությունը 1880-1946 թթ.» գիրքը, որը շատ լավ է ընդունվում ակադեմիական շրջանակներում: Նույն տարին, 35 տարեկանում, պրոֆեսորի պատասխանով հրավիրվում է դասավանդելու Օսթինի Թեխաս համալսարանում:

Համբավն ու հեղինակությունը հետզհետե աճում են. 1970-ականների սկզբներին Ֆիլադելֆիայի Փենսիլվանիա համալսարանն է վարչական պատասխան առաջարկում, որից հետո նրա առաջ բացվում են Նյու Յորքի հանրային գրադարանի դռները:

Վերջին յոթ տարիներին նա պատվախնդրությամբ կատարում է Նյու Յորքի Կարնեգի բարեգործական կորպորացիայի նախագահի պարտականությունները:

Ամենաականավորների թվում

Վարդան Գրիգորյանին դասում են Նյու Յորքի ամենաականավոր անձնավորությունների՝ Բրուտ Աստորի, Փիթեր Ջենինգզի, Ֆիլիպ Ջոնսոնի, Դանիել Պատրիկ Մոյնիհանի (սենատոր) եւ Լիզ Սմիթի շարքում: Նրան կոչում են «կենդանի հուշակոթող»: Նա խոշոր գիտնական է, պատմաբան, մանկավարժ, մշակութային, հասարակական գործիչ, բացառիկ ինտելեկտի տեր անձնավորություն եւ գերազանց դեկավար: Նրան նկարագրելիս «Նյու Յորքեր» հայտնի պարբերականը «երեւույթ» բառն է օգտագործել, որը ոչ բոլորին է բաժին ընկնում: Նոբելյան մրցանակակիր, գրող Էլի Ուիզելը նրա «Ճանապարհ դեպի տուն» գիրքը կարդալուց հետո գրել է. «Ըմբռնել Վարդան Գրիգորյանի կլանող անձնական պատմությունը նշանակում է ըմբռնել իմաստությունը, ջերմությունը եւ զվարճախոսությունը բացառիկ ինտելեկտի տեր մի անձնավորության, որի ասածի մեջ իմաստ կա եւ փիլիսոփայություն»: Իսկ հեռուստալրագրող Բարբարա Ուոլթերզը նույն առիթով հեռաստրել է. «Եթե այնքան բախտավոր եք, որ անձամբ ճանաչում եք Վարդան Գրիգորյանին, ապա կգիտակցեք անշուշտ, որ նա խորաթափանց, իմաստուն, կարկառուն եւ կատարյալ անձնավորություն է: Եթե անձամբ չեք ճանաչում, ապա նրա հուշագրությունը լավագույն «փոխարինողն» է, որ կարող եմ առաջարկել Ձեզ»:

Բացի «Ճանապարհ դեպի տուն» եւ «Արդի Աֆղանստանի գոյառումը» գրքերից, նա հեղինակել է նաեւ «Իսլամը որպես խճանկարային եւ ոչ թե միակոտ կառույց» ուսումնասիրությունը, որը նշանակալի ներդրում է համարվում ներկայումս Ամերիկայում այդ հարցի շուրջ ընթացող բանավեճերում: Գրել է հարյուրավոր հոդվածներ՝ օգտագործելով Վ. Հարյան կեղծանունը: Իրենից խորհուրդ հարցնողներին նա պատասխանում է. «Չպետք է լինել ինքնագոհ: Եղեք հեռահրատես եւ հավատացեք, որ ոչինչ չկա, որ չկարողանաք անել»: Արժանացել է բազմաթիվ պարգեւների, այդ թվում՝ նախկին նախագահ Բիլ Քլինթոնի կողմից՝ «Ազգային հումանիտար գիտությունների» մեդալին: Նյու Յորքի հանրային գրադարանին մատուցած ծառայությունների համար գլխավոր ընթերցասրահը անվանակոչվել է նրա անունով:

Ներկայումս «Կարնեգի» ամենամեծ բարեգործական կորպորացիայի միջոցով նա շարունակում է գիտելիքների եւ ըմբռնողության զարգացմանը նպաստակատղված իր առաքելությունը:

Պատրաստեց
ՀԱՐՈՒՆ ՕՈՒԼԻԿՅԱՆԸ

Բացառիկ ինտելեկտի տեր անձնավորություն՝ Դոկտ. Վարդան Գրիգորյան

Անցյալ շաբաթ ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը 12 անձանց թվում, որոնց մեջ է նաեւ Հռոմի Հովհաննես Պողոս Երկրորդ պապը, ԱՄՆ քաղաքացիական բարձրագույն «Ազատություն» պարգեւն անձամբ հանձնեց նախկինում Նյու Յորքի հանրային գրադարանի եւ Բրաուն համալսարանի պրեզիդենտ, ներկայումս Նյու Յորքի «Կարնեգի» բարեգործական կորպորացիայի նախագահ, ամերիկահայ պատմաբան եւ մանկավարժ Վարդան Գրիգորյանին: Ո՞վ է նա եւ ի՞նչ ճանապարհ է անցել հասնելու համար այդքան բարձր ու պատասխանատու պաշտոնների: Աստրեւ ներկայացնում ենք «AGBU» պարբերականից եւ «Արմինյոն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթից թարգմանաբար քաղված տեղեկություններից որոշ կենսագրական մանրամասներ:

Հոր եւ խորթ մոր հետ ունեցած լաված հարաբերությունը մեծապես մտահոգել է նրան, եւ կարողացել է ճակատագրի հարվածներին դիմանալ Թավրիզի փողոցներում ընկերների հետ ժամանակ անցկացնելով, հայկական եկեղեցում պատարագին եւ արարողություններին ներկա գտնվելով եւ ամերիկյան վեսթերն ֆիլմեր դիտելով: Բայց գերագույն «փախուստը» ամեն ինչից նա գտել է գրքերի մեջ: «Գրքերն ազատեցին ինձ բանտից եւ տեղափոխեցին հնարավորությունների հեռավոր, բայց հրաշալի մի աշխարհ, որտեղ կյանքը գեղեցիկ է, արդար, կրթոտ, եռանդուն, կարեկից եւ հաճելի», գրում է նա «Ճանապարհ դեպի տուն: Իմ կյանքը եւ ժամանակները» անցյալ տարի հրատարակված հուշագրությունների գրքում:

Գերազանց սովորող երիտասարդն արժանանում է Թավրիզում Ֆրանսիայի փոխհյուպատոսի ուշադրությանը: Վերջինս դառնում է նրա առաջին «դասատարակն» ու «բարեբարը», որն օգնում է ճգնաժամային պահերին: Տասնհինգ տարեկանում Թեհրանից մենակ մեկնում է Բեյրութ եւ մտնում ճեմարան: «Մանուկ հասակում միշտ էլ մի պահ գալիս է, երբ դուռը բացվում եւ ներս է թողնում... ապագան», գրում է նա: Այդպիսի շրջադարձային պահ է նրա Բեյրութ ժամանելը: Նա պետք է մի տարում սովորեր արաբերեն, ֆրանսերեն եւ անգլերեն: Չնչին գումար գրպանում, երբեմն առանց ուտելիքի նա հաղթահարում է դժվարությունները, արժանանում ավարտական հանդեսի օրը շրջանավարտների անունից խոսք ասելու պատվին եւ դառնում կրթական հասատության տնօրեն Սիմոն Վրացյանի անձնական խորհրդականը: Հանդիպում եւ շատ բան է սովորում Լեւոն Շանթից:

Միացյալ Նահանգներում

Եռանդուն եւ հեռահրատես երիտասարդը ծանոթների օժանդակությամբ տեղափոխվում է Միացյալ Նահանգներ եւ ընդունվում Կալիֆորնիայի Ստենֆորդ համալսարանը, որտեղից բակալավրի աստիճանն ստանալուց անմիջապես հետո ձեռնամուխ է լինում դոկտորական պատրաստելու Եվրոպայի եւ Միջին Արեւելքի պատմության բնագավառում: Ուսումնառության տարիներին հանդիպում է իր ապագա կնոջը՝ Ջլերին: 1960-ականների սկզբներին սկսում է դասավանդել



«Երբ սանձնեցի աշխարհի մեծագույն գրադարանի պրեզիդենտի պաշտոնը, գրադարանի հոգաբարձուներից մեկն ինձ հարցրեց, թե հոգեբույժի մոտ եղել եմ», գրում է նա եւ բացատրում. «Որպիսեւ իրոք հիմարություն եւ մեծ ռիսկ էր նման քայլ անելը: Գրադարանը ֆինանսական աղետալի վիճակում էր»: Անդուլ, հետեւողական ոգեւորության շնորհիվ նա հաջողությամբ վերականգնում է գրադարանի հեղինակությունը եւ դերը ամերիկյան մշակութային կյանքում:

Նյու Յորքի բարձր հասարակության «մայր» հորջորջված ականավոր Բրուտ Աստորը ի պատիվ նրա ընդունելությանը հրավիրում է նույն անձնավորություններին, ում հրավիրել էր այդ ժամանակվա ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի պատվին տված ընդունելությանը: Երբ Գրիգորյանը նրան այդ մասին զարմացած հարցնում է, տիկին Աստորը պարզաբանում է, «Նյու Յորքի հանրային գրադարանի պրեզիդենտը կարեւոր քաղաքացի է ինչպես Նյու Յորքի, այնպես էլ ամբողջ ազգի: Նա ներկայացնում է Նյու Յորքի եւ ազգի կարեւորագույն հասատություններից մեկը»:

1989-97 թթ. Վարդան Գրիգորյանը սանձնում է Բրաուն համալսարանի պրեզիդենտի պաշտոնը եւ նոպնոպես բարելավում կրթօջախի ֆինանսական վիճակը, որի հետեւանքով 1 միլիարդ դոլարի է հասնում նրա կապիտալը եւ նվիրատուների քանակն ավելանում 260 տոկոսով:

Սփյուռք - Հայաստան Տարանջատո՞ւմ, թե՞ կամրջում

«Իմ կարծիքով, մենք տարբեր ազգեր ենք: Հայաստանը Կովկասին է պատկանում, սփյուռքն իր պոլսահայ արմատով եւ զանազան ազդեցություններով բոլորովին տարբեր աշխարհ է: Մեզանից անկախ երկու տարբեր ազդություններ են ստեղծվել: Արյունով միեւնույնը, լեզվով գրեթե նույնը, բայց աշխարհայացքով՝ գրեթե հակոտնյա»: Պրահայում լույս տեսնող «Օրեր» հանդեսի 2003 թ. 6-8 համարում խմբագիր Հակոբ Ասատրյանի հարցազրույցում ասված Երվանդ Ազատյանի այս արտահայտությունը տարակուսանքների տեղիք է տվել:

- Պրն Ազատյան, որքան տեղյակ եմք, Ձեր ողջ գործունեությունը մշտապես միտված է եղել ազգապահպան խնդիրներին: Դուք այն մտավորականներից եք, ովքեր մեր ազգային արժեքները, մշակույթը գնահատում են համաշխարհային քաղաքակրթության համապատկերում: Նաեւ սփյուռքահայ այն գործիչն եք, որ տարիներ շարունակ սերտ կապեր է պահպանել Հայաստանի հետ՝ քաջատեղյակ հայության արեւելահայ հատվածի հասարակական-քաղաքական, ազգային-մշակութային կյանքին՝ դեռ խորհրդային տարիներից, ինչպե՞ս կմեկնաբանեք վերոնշյալ ձեր խոսքերը:

- Նախ՝ հարցազրույցը բանավոր էր, հետեւաբար չէի կրնար հիշյալը չակերտների մեջ առնել, կուզեմ այս մեկ ճշտումը ընել: Երկրորդ՝ ես մեջբերում մը ըրած եմ Բեռնարդ Շոուեն, որ կըսե, թե ամերիկացիները անգլիացիներն են, միեւնույն ազգն են՝ բաժնված նույն լեզվով: Շատ խորիմաստ բացատրություն մըն է: Երրորդ՝ անոնք, որոնք վիրավորված կզգան այս արտահայտութենեն, այն վերագրումը կընեն ինձի, որ ես այդ տարբերությունը ընդունող մեկն եմ: Ընդհակառակը՝ ես այդ տարբերությունը մեջտեղ դրած եմ, որպիսեւ մենք մեկ ազգ պետք է ըլլանք, թեեւ ժառանգությամբ, մշակույթով՝ տարբեր: Սովետական շրջանին ինչ որ արեւմտահայ մշակույթին մեջ կարասառեցավ: Մեր բոլոր գրական մեծությունները միայն արեւելահայ գրականության մեջ երեւցան՝ Իսահակյան, Տերյան, Թումանյան: Ես սփյուռքյան այն մտավորականներեն եմ, որ շատ փոքր տարիքեն սնված եմ երկու գրականությամբ եւ ուղղագրության հարցը բացարձակապես դժվարություն չէ եղած եւ նույն հարազատությունն եմ զգացած, բայց այստեղ՝ Հայաստանի մեջ, չեմ զգացած, թե նույն հարազատությամբ ընդունված են Վ. Թեքեյանը, Դ. Վարուժանը, Սիամանթոն: Այսօր անկախ Հայաստանի մեջ, Երեւանի մեջ Թեքեյանի անունով փողոց չկա: Վ. Թեքեյան հանճար է, բայց հոս այդպես չընկալվիր: Հոս է մշակույթներու տարբերությունը:**

Բան մը հիշեմ, որ մեծ ցնցումով լսած եմ: Անկախության ճիշտ հռչակված օրերուն, երբ այնքան հրավանք կար մարդոց մեջ, մամուլի տունը մոտ հարյուր լրագրողներու հանդիպեցա: Ըսի՝ ձեզի համար որքան կարեւոր է արեւմտահայ հողերու վերադարձը, որպեսզի մեկ ամբողջական Հայաստան ունենանք (իրենք ինձի հարցում կընեին, ես ալ իրենց հարցուցի): 50 տոկոսը միայն ձեռք բարձրացուցին: Ասիկա մտայնության տարբերություն չէ՞: Բայց ասիկա հինեն կուգա. զորավար Անդրանիկ Էրզրումի մեջ հսկա զինամթերք ուներ, ռուսական բանակին արեւելահայ զինվորներն ըսին... սա մեր հայրենիքը չէ, չենք պատշաճներ:

Հայրենասիրության չափանիշին մասին մեկ ուրիշ բան մը ըսեմ. ամբողջ սովետական շրջանին ջանացած են սովետահայ ժողովուրդին մեջ ներարկել՝ սովետական հայրենասիրություն կոչված բանի մը հանդեպ հարգանք եւ այդ ամբողջ շրջանին շատ գավառական հայրենասիրություն մը առաջացած է: Օրինակ մը տամ (ինձի Գեւորգ Էմինը պատմած է). Հիսլերը սովետական բանակի զինվորներ Կերչի մոտ գերեվարած եւ քարայրի մեջ նետած է: Հայ մը ըսած է. «Ձեր մեջ ախտացի մը կա՞», այնտեղեն ուրիշ մեկն ալ ըսած է. «Եղբայր, ասա ձեր մեջ հայ կա՞, հետո Ախտայի մասին մտածե»: Ասիկա գավառական հայրենասիրություն է, ավանդական, սովորութային, բարոյական նույն ըմբռնումներու պարագային՝ հասկանալի է, բայց շեշտված անջատումը վնասակար է:

- Տարանջատման աշխարհաքաղաքական, մտայնության, լեզվի, ուղղագրության, պատմական պատճառներն ակնհայտ փաստեր են: Սակայն մենք մեկ ազգ, մեկ մշակույթ ծրագիր իրականացնելու խնդիր ունենք: Ինչ է հարկավոր այդ տարանջատվածությունները մերձեցնելու, վերացնելու համար: Թեեւ համաձայն չեմ Ձեր այն կարծիքին, թե արեւմտահայ մշակույթը հարազատ չէ մեզ: Նույնքան, գուցե եւ ավելի, հոգեհարազատություն կզգամ Մեծարենցի կամ Վարուժանի, Թեքեյանի հանդեպ: Այլ հարց է, թե որքա՞ն ենք ճանաչում, որովհետեւ սերը ծնվում է ճանաչողությունից:

- Ես կուզեմ, որ մարդիկ սխալ չհասկնան. մենք տարբեր ազգեր ենք՝ տարբեր մշակույթներո՛վ, տարբեր աշխարհայացքներո՛վ, պատմական տարբեր ընթացքներո՛վ, տագնապով կըսեմ ասիկա: Հիմա, որ անկախ Հայաստան ունինք, այդ տարբերությունները պիտի նվազեցնենք: Անդրադառնանք լեզվի, ուղղագրության հարցին: Արեւելահայ լեզուն իր զարգացումն ունեցած է, արեւմտահայերենը հեռզհետե գիրքերու մեջ քարացած, աղամանդակուռ բովանդակության մը հասած է եւ, դժբախտաբար, ժողովրդական հասկացողության հասու չէ: Արեւելահայերենը կենդանի, ճոխ լեզու է, եւ ես շատ մը արտահայտություններ կօգտագործեմ թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքիս մեջ, որովհետեւ այդ լեզուներու մերձեցումը կարեւորած եմ: Դուք ալ արեւմտահայ բառամթերքը եթե օգտագործեք, լեզուն կհարստանա:

Ես միշտ այն տեսակետին եմ եղած, որ այս ուղղագրությունը (աբեղյանական) ոչ միայն անջատած է արեւելահայը արեւմտահայեն, այլեւ արեւելահայը անջատած է իր արմատներեն: Բառակերտումն եթե կուզեք ընել, բառերու սուղաբանություն չեք կրնար ընել եւ կմնաք մակերեսի վրա:

Անդրադառնալով **«Ազգին»** ուղղագրության՝ առաջին օրերուն խմբագրին հետ միասին գացինք Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտ, հարցուցինք, թե ինչ թելադրություն ունի: «Թելադրություն մը չունիմ», ըսավ, բայց առաջարկեց դասական ուղղագրությամբ հրատարակել թերթը (ասիկա պատմության համար կրնաս արձանագրել): «Դուք կառաջարկեք մամուլին եւ ժողովրդին միջեւ անջրպետ մը ստեղծել, ըսի: Ռ. Իշխանյանը «Ուրբաթ» թերթը կհրատարակե դասական ուղղագրությամբ եւ 12.000 տպաքանակեն այսօր 1000-2000-ի իջած է»: «Ադիկա բովանդակութենեն է», պատասխանեց: «Չեմ կարծեր, ուղղագրությունն ալ իր դերը ունեցած է», ավելցուցի: Երբ դուրս եկանք, որոշեցինք՝ դասական ուղղագրությամբ գրողը հրատարակվի դասականով, աբեղյանականով գրողը՝ աբեղյանականով:

Կուզեմ եզրակացնել, որ այդ տարբերությունները կամրջելու համար ամբողջ կյանքս նվիրած եմ (կյանքս ոչինչ է), բայց կուզեմ ուրիշներն ալ ընեն, որ այդ «տարբեր», չակերտված տարբեր ազգերն իրարու մոտեցնեն, ոչ միայն ուղղագրությամբ, լեզվով, մտայնությամբ, այլեւ հայրենասիրության միեւնույն տարազով: Հոգ չէ, թե մենք Ամերիկա կբնակինք, նույն ազգային գաղափարախոսությունը ունենանք:

Շահնուրը ամենեն վարկաբեկիչ արտահայտությունը ունեցած է Նարեկացիին մասին: Ինչ է, կնշանակե Շահնուրը չի՞ սիրեր, չի՞ գնահատեր Նարեկացին: Ադիկա հայուն իր մշակույթեն օտարացման ցավին արտահայտությունն է: Ճիշտ այն, ինչ որ է իմ նպատակս՝ երկու հատվածներու իրարու օտարացումի ցավին արտահայտությունը:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԲԱՂՇԱՅԻՆ

Փառատոնի Օրագիր



ՈՍԿԵ ԾԻՐԱՆ

GOLDEN APRICOT

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՖԱՌԱՏՈՆ

30 ՀՈՒՆԻՍ - 4 ՀՈՒԼԻՍ, ԵՐԵՎԱՆ 2004

Հայկական կինո - 80

ՈՒՏՐՈՍՊԵԿՏԻՎ

Հույս

Անցյալ տարի հայ կինոն դարձավ 80 տարեկան: Իսկ միգուցե՝ այս տարի: Գուցե եւ՝ գալ տարի: Նայած, թե որտեղից հաշվենք:

Երկրներ կան, որ իրենց կինոյի ծննդյան թիվ են համարում երկրի տարածքում կատարված առաջին նկարահանումները: Օրինակ՝ Իրանը, որը մի քանի տարի առաջ նշեց իր կինոյի 100-ամյակը, թեեւ առաջին իրանական ֆիլմը նկարահանվել է 1929 թվականին:

«Մեքսիկական դիպլոմատներ»

Իսկ կան երկրներ, որ հաշվարկում են պետության կողմից կինոարդյունաբերության հիմնման մասին համապատասխան փաստաթղթերի ստորագրումից: Օրինակ՝ նախկին Սովետական Միությունը (այժմ՝ Ռուսաստանը), որը սովետական կինոյի սկիզբ էր համարում 1919-ին ստորագրված դեկրետը, թեեւ առաջին խաղարկային ռուսական ֆիլմը նկարահանվել է 1908 թվականին:

Այսինքն՝ ամեն ինչ հարաբերական է:

Առաջին մեզ հայտնի նկարահանումները Հայաստանի տարածքում կատարվել են 1908-ին (լավ առիթ է չորս տարի հետո տոնելու 100-ամյակը), պետական կինոկառույց հիմնելու որոշումը ստորագրվել է 1923-ին, առաջին ազգային ֆիլմը նկարահանվել է 1924-ին, առաջին խաղարկայինը՝ 1925-ին: Երեք տարի անընդհատ կարող ենք տոնել հայ կինոյի 80-ամյակը: Տոնելու բան լինի: Սա է հարցը:

Իսկապես, կա՞ արդյոք այն, ինչ անվանում ենք հայկական կինո: Չէ, իհարկե, 80 տարի, որոշ ընդհատումներով, վերելքներով եւ անկումներով, ֆիլմեր են նկարահանվել՝ լավ, թե վատ: Բայց կա՞ արդյոք մի ընդհանուր դիմագիծ ունեցող երեւույթ, մի ընթացք, որ ունեցել է իր ներքին գեղագիտական կամ հասարակական օրինաչափությունը: Որքանո՞վ կարելի է հայկական ֆիլմերով դատել հայ ժողովրդի, նրա անցյալի ու ներկայի, նրա ինքնաիմության մասին: Որքանո՞վ է, վերջապես, հայ կինոն դարձել հասարակական երեւույթ, մշակութային երեւույթ, ազդել հայի ձեւավորման վրա, մտել նրա կյանքն ու կենցաղը: Կարողացե՞լ է այնպիսի որակ ունենալ, որ մտնի համաշխարհային ասպարեզ եւ այնտեղ ներկայացնի հայի տեսակը, մտածելակերպը, դարդն ու ցավը:

Սկսենք վերջին հարցից եւ անկեղծորեն խոստովանենք. հայ կինոն աշխարհին հայտնի չէ: Անգամ աշխարհահռչակ Փարաջանովը ոչ միշտ է ներկայացվում որպես հայ ռեժիսոր, քանի որ ավելի շատ աշխատել է Փելեշյանին, կինոաշխարհը միայն վերջերս է հայտնագործել եւ սկսել հասկանալ նրա մեծությունն ու նորամուծությունը համաշխարհային կինոարվեստին:

Սակայն պետք է ընդունենք նաեւ, որ մի շարք խոշոր արտասահմանյան ցուցադրումներում, երբ հայ կինոն ներկայացված է եղել միայն, թե շատ ամբողջական տեսքով, զարմանք է պատճառել «աչքները կուշտ» կինոգործիչներին իր բարձր գեղարվեստական մակարդակով եւ ինքնաիմությամբ:

Ինչ վերաբերում է հայ հանդիսատեսին, ապա նա շատ մեծ դեր է ունեցել հայ կինոյի կայացման գործում: Հայկական կինոն երբեք ոչի չէր կանգնի սկզբնական շրջանում, եթե չլիներ հանդիսատեսի սերն ու նրա ռուբլիները – կոպեկները: Չուրանանք եւ հիշենք նաեւ, որ հայ կինոյի ստեղծած կերպարները ժողովրդական են դարձել, ժողովուրդը ասացվածքներ էր դարձնում ֆիլմերից վերցված ռեպլիկները, երգում էկրանից հնչած երգերը՝ «Պեպոյից» մինչեւ «Մենք ենք մեր սարերը», «Հարսնացուն հյուսիսից»:

«Շոր եւ Շորշոր»

«Գիքոր»

Իսկ հիմա... Հիմա մի աննախադեպ վիճակ է ստեղծվել հայ կինոյում. երիտասարդների ահռելի բանակ է գալիս ասպարեզ, իր հետ բերելով նոր վերելքի հույսեր: Կարդարանա՞ն դրանք: Չեմ կասկածում:

Միքայել ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Սուրբ ծեսերի երկիրը

Կինոռեժիսոր Էդգար Բաղդասարյանի «Սուրբ ծեսերի երկիրը» ֆիլմը ներկայացված է փառատոնի մրցութային ծրագրում: Այն բավական մեծածավալ, թանկարժեք նախագիծ է, որի իրագործումը Հայաստանում բացառիկ երեւույթ է մեր օրերում: Ստեղծման գաղափարը պատկանում է ֆիլմի պրոդյուսեր Մանուկ Գետոգյանին, նկարահանող օպերատորը Վահագն Տեր-Հակոբյանն է, որի մասնագիտական բարձր կարողությունները միանգամայն ակնհայտ են: Հարկ է կարեւորել նաեւ հարուստ ինչյունաբարը (Արա Թորոսյան), որ նեռագրում է հանդիսատեսի վրա՝ ֆիլմը մոտեցնելով նրա ընկալմանը: Տեսաբարը մեկնաբանող տեքստի անհրաժեշտությունը օգտակար է հեղինակներին տարբերակի համար միայն, իսկ մեծ էկրանին տիրում է պատկերը, որի խորհուրդն իրականում անմեկնելի է: Այսօրինակ ֆիլմերը խոսքի արարումին ենթակա չեն. դրանք անհրաժեշտ է դիտել:

«Սուրբ ծեսերի երկիրը» ասես ներքին մի հայացքով նկարահանված ֆիլմ է, մի հայացքով, որ միավորում է նյութականն ու ոգեղենը: Միայն կատարյալ տեխնիկայի օգնությամբ (իսկ ֆիլմը տեխնիկական չափանիշերով բավարարում է այդ պահանջները) հնարավոր չէ հասնել գեղարվեստական բարձր որակի: Որքան ֆիլմեր ենք տեսել, որ կինոխցիկն ընդամենը արձանագրել է իրականությունը եւ ժարավենին ունչ հաղորդելու փոխարեն մեռյալ պատկերներ դրոշմել դրա վրա:

Դահլիճում նստած հանդիսատեսը Վատիկանից՝ ս.Պետրոսի հրապարակից, տեղափոխվում է Երուսաղեմ, այնուհետեւ՝ Հայաստան, Էջմիածին, նորից՝ Հռոմ, հետո՝ Պարսկաստան, վերջապես՝ Վանա լիճ, Աղթամար Կարդովկիա, որ գտնվում են աշխարհում առաջին քրիստոնեական տաճարները՝ ավազե արտաստվոր կառույցները: Մեկ ուրիշ դրվագ. կարդի շրջանակում ընդգրկված ծիթենիների տարին ցնծացողը զգում ու հավատում է, որ դրանք Քրիստոսի ժամանակակիցն են: Հետո հեստրովում եւ իմանում է՝ թվացյալն իրողություն է. իսկապես, այդ ծառն արդեն 3 երիտասարդ եւ ավելի տարի է: Ինչ հրաշք կա մարդու դեմին, որ զգուշորեն նկատում է կինոխցիկը՝ աննկատ մնալով այդ մարդու համար: Բոլորս փոխվում ենք, երբ կինոօբյեկտիվը սկսում է բացահայտ զննել մեզ: Իսկ ինչպիսի՞ն է մեր դեմքը աղոթքի պահին: Ահա ճշգրիտ մոնտաժային ռիթմով հերթագայվում են տարբեր դավանանքի պատկանող մարդկանց՝ Գոյի անսահմանության մեջ կենտրոնացած հայցող դեմքերը: Եվ ինչ անհոգ ու անկաշկանդ ազատություն կա վարդավառի տոնին միմյանց վրա ջուր լցնող երեխաների դեմքերին. միեւնույն ժամանակ գլուխ են բարձրացնում ինչ-որ դանդաղահոս տագնաք ու մտահոգություն: Պարզապես խաղը՝ «ջոցին», էկրանին դարձել է ծես, արարողություն: Այդպիսին է այս կինոկտավը, որ թույլ է տալիս երկխոսել աշխարհի հետ, անտեսելով սահմանները՝ հայտնվել էկրանով սահող ամպերի, քամիների ու ստվերների ներքո, որ հարուրամյակներ շարունակ անցել են մեր՝ Սուրբ ծեսերի երկրի վրայով՝ ջնջելով անցյալի ու ներկայի հարափոփոխ սահմանը:

Միհրանուշ ԳԱԼՍՏՅԱՆ

Ֆոնդիայի «Վագրերը» Երեւանում

Հայաստան կատարած իմ առաջին այցից պահպանած ամենաուժեղ տեսողական հիշողությունը վաղ հոկտեմբերի պարզ եւ արեւոտ առավոտն էր, երբ արթնացա Երեւանից դուրս՝ բլրի վրա գտնվող Կարմիր խաչի ժամանակավոր խրճիթում եւ տեսա Արարատի հրաշալի պատկերը: Բիբլիական սարը ծածկված էր սպիտակ ամպերով, թողնելով գագաթը չծածկված եւ ձյունածածկ, ինչպես իմաստուն ծերունու գլուխը: Դա 1999 թվականն էր, երկիրը հոգնել էր երկար տոգ ամառվանից, նախորդած պատերազմական հակամարտություններից եւ հետխորհրդային ժամանակաշրջանի տնտեսական ճգնաժամից:

Մի կողմից, իմ ուժեղ զգայական հիշողությունները կապված են հայ տանտերերիս ջերմության եւ հյուրընկալության հետ: Նրանք կինոաշխարհի մարդիկ էին, որոնք արեցին ամեն ինչ սրտով եւ հոգով, որպեսզի պահպանեն հայկական կինոյի գոյությունը: Կովկասյան տարածաշրջանում կինոյի ներկայիս իրավիճակի իմ այդ ժամանակվա ուսումնասիրությունը ինձ տարավ նաեւ հարեւան երկրները՝ Վրաստան եւ Ադրբեջան եւ բացահայտեց ազգային կինոստուդիաների ավերված վիճակը: Փոփոխությունների ժամանակն էր:

Հինգ տարի անց Հայաստանը հանդես է գալիս առաջին ազգային կինոփառատոն կազմակերպելու նախաձեռնությամբ, ներառելով ստիպտոը՝ «Ոսկե Ծիրան»: Կեցցե՞ կինոն:

Կինոն յուրահատուկ երկրի մշակութային ժառանգության կարեւոր բաղադրիչներից մեկն է, եւ խաղարկային գործիչները պետք է ամենուրեք հասկանան սա: Ցանգվածային եւ կոմերցիոն կենսունակ զվարճալիքի հետ մեկտեղ (որի աճը այսպես տեսանելի է մեր օրերի Եվրոպայում), գեղարվեստական արժեք ունեցող (կամ հեղինակային կինոն) ստիպված է դաժան պայքար մղել իր գոյության համար: Հայ կինոռեժիսորները անհայտ չեն հոլանդացի հանդիսատեսին. Ռոտերդամի միջազգային կինոփառատոնը անցյալում ցուցադրել է Փարաջանովի ֆիլմերը, իսկ անցած տասնամյակում՝ Ատոմ Էգոյանի, Հարություն Խաչատրյանի, Դոն Ասկարյանի եւ Դավիթ Սաֆարյանի ֆիլմերը: Այս անգամ Ռոտերդամի ՄԿՓ-ն է գալիս Հայաստան եւ ներկայացնում է «Վագրի» 3 երիտասարդ մրցանակակիրների Ռուսաստանից (Լարիսա Սադիլովա), Չեխիայից (Բոհդան Սլամա) եւ Ռումինիայից (Սինիսա Դրագին):

«Վագրի» մրցանակաբաշխությունը Ռոտերդամի ՄԿՓ-ի էական մասերից մեկն է եւ ամեն տարի ընդգրկում է երիտասարդ եւ դեբյուտանտ կինոռեժիսորների առաջին կամ երկրորդ 15 խաղարկային ֆիլմեր աշխարհի բոլոր ծայրերից: Քանի որ ժամանակն ու տարածությունը մեզ թույլ են տալիս ցուցադրելու տասնհինգ տարում ի հայտ եկած մրցանակաբաշխության հաղթողների նվազագույն ընտրանին, մենք որոշել ենք ցուցադրել միայն վերջին տարիների հաղթողներին՝ նախկին Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջանից: Դուք կվայելեք երեք տարբեր մշակույթներ, ժանրեր, մոտեցումներ: Թող որ դրանք ոգեշնչեն երիտասարդ եւ նորելուկ կինոռեժիսորներին՝ Հայաստանում ճանապարհ հարթելու դեպի Ռոտերդամ եւ ընդունելություն գտնելու այնտեղ:

Լյուդմիլա ՏԱՐԿՈՎԱ
Ռոտերդամի կինոփառատոնի
Ծրագրերի ղեկավարուհի

Արդուքային Ծրագիր

ՈՍԿԵ ԾԻԲԵՌ

GOLDEN APRICOT

Ստոմ Էզոյանը՝ «Արարատի» մասին

Պատմությունը

Ես ցանկացել եմ խոստակցություն բացել պատմությունն առարելու մասին... Մենք պետք է հասկանանք, որ պատմությունը հենց այն է, ինչ ինքներս ենք ստեղծում: Այսօր պատմությունը կատարված դեպքերը չեն, այլ այն, որ մեզնից ներում չեն հայցել: «Արարատը» պատմական ֆիլմ չէ: Շատերն են այդպես ընկալում, բայց այդ ընկալումը որեւէ հիմք չունի: Իմ ֆիլմը խիստ կանադական է, ես պետք է ցեցտեմ սա: «Արարատը» նկարահանվել է ներկայիս Թորոնթոյում եւ պատմության որվականների հետ առրելու մասին է: Այդ տեսակետից, ֆիլմը, ըստ իս, ափխարհ է եկել ճիշտ ժամանակին՝ այս հարցադումները դնելու իմաստով. որքանո՞վ է հասարակությունն ի վիճակի հանդուրժելու ուրիշի պատմությունը եւ պե՞տք է արդոք հանդուրժի:

Ցեղասպանությունը

Ցեղասպանության փաստը անվիճելի է: Ես հասկանում էի, որ ֆիլմի վերջում հանդիսատեսները կարող են հարց տալ, եթե ես ինքս ինձ հարց չտամ Ցեղասպանության իսկության մասին: Այդ պատճառով էլ կարետր համարեցի վերջում մի ծանուցում զետեղել, որ հենց այս պատմական դեպքերն էլ ներկայացնում են Հայոց ցեղասպանությունը: Փաստերը չեն վիճարկվում: Հարցերն առնչվում են դրանց մեկնաբանման եղանակին: Սա շատ խոր խնդիր է, ինչի որ դատարանում մեկնաբանությունն է բնորոշում փաստերը: Ես՝ որպես արվեստագետ, ֆիլմում ասում եմ, որ փաստը բնորոշելն ու իբրեւ մեկնաբանություն օգտագործելը եւ այդ փաստի ժխտումն ստեղծում են վերաբերմունքի սեփական մոդելը: Դա դառնում է իրականություն, ճշմարտություն: Ահա թե ինչն է վտանգավոր հայերի համար: Եթե մենք շատ ուշադրություն հատկացնենք այն եղանակին, որով այս երկրում իրականությունը բնորոշում է պատմական փաստերի մեր ընբռնումը, կդառնանք խոցելի... Պիտի խիստ զգաստ լինել, որպեսզի հանցագործության մեջ այլ կողմ չկա: Կարելի է հարցնել, թե ինչու է մեկը հանցանք գործել, բայց չի կարելի հանցագործի մեղքին թողություն տալ, ինչի որ հարցրել ես, թե ինչու է նա այդ հանցանքը գործել:

Դատապարտումը

Իմ կարծիքով, ֆիլմն ամենեւին չի ջանում այսօրվա Թուրքիային ներկայացնել դիվային լույսով: Փաստորեն՝ ընդհակառակը: Ես փորձում եմ հանդիսատեսին խորհել տալ, թե ինչ է նշանակում դատապարտել այսօր ապրողներին այն արարքների համար, որ հանուն բարու կամ չարի գործել են նրանք, ովքեր այլեւս չկան:

Ժխտումը

Մյուս ժողովուրդների պատմության մեջ հերքվող աղեն չկա: Իսկ սա Հայոց ցեղասպանությանը համընդհանուր բնույթ է տալիս՝ փաստորեն դարձնելով մարդկության դեմ գործված ոճիր, որը հետեւողականորեն ժխտվում է: Ինչո՞ւ: Որքանո՞ւ են դրա հետեւանքները մեզ համար: Ահա մեր առանձնահատկությունը:

Հիշողությունը

Այն դեպքերը, որ նկարագրված են ֆիլմում, լիովին հաստատված են եւ հիշողության մեջ դրոշմված: Ֆիլմը չի փորձում դրան ոչինչ ավելացնել: Խնդիրն այն է, թե իրադարձությունն ինչպես է սերնդեսերունդ փոխանցվում, ինչպես են նման բաները գոյատեւում եւ վերածվում զույգների զավակներիդ հետ, ամրագնդված ժառանգության: Որպես հասարակություն՝ մենք հենվում ենք համընդհանուր հիշողության վրա, եւ պատմությունները, որ ծնողներից անցնում են երեխաներին, իսկ նրանցից էլ՝ իրենց երեխաներին, շատ կարեւոր են այն իմաստով, թե ինչ պիտի դառնանք: Ես կենտրոնացել եմ մի պատմության վրա, քանի որ այդ պատմությունն է ինձ հոգեհարազատ, բայց ձգտել եմ ֆիլմը դարձնել հնարավորին չափ համապարփակ:

Ինքնությունը

Ոչ ոք ինձ չի հուշել անելիքս, եւ իմ ափխատանքը անձնական է: Ես շատ եմ պրպտել, փորձել եմ չշեղվել իմ ճանապարհից, ես խոշ գիտակցում եմ իմ ինքնությունը: Եվ «Արարատը» պատմում է իմ ինքնության, «ես»-ի մասին: Որքան էլ ոմանք փորձեն թելադրել, թե իմ ֆիլմն ինչպիսին պիտի լիներ, դա միանգամայն անօգուտ է եւ ոչ մեկին պետք չէ: Եթե նրանք այդքան լիավստահ են, թե գործն ինչպես կանեին, հաջողություն եմ մաղթում նրանց:

Ցավը

Հենց ի սկզբանե ես նպատակ ունեի այնպիսի կինոպատմություն անել, որը կներկայացներ իմ ինքնության մի մասը 18 տարեկանում: Ես կարիք ունեի ինչ-որ ձեւով արտահայտելու այն ամենը, ինչին բախվել էի կյանքիս այդ շրջանում, այնպիսի պատմելաձեւ գտնելու, որ իմ ապրածը անհրաժեշտ եւ օգտակար լիներ ուրիշներին: Ստեղծագործելը ցավը հաղթահարելու միջոց է:

Հավասիությունը

Երկու թուրք լրագրող, որոնց հաջողվել էր «Արարատը» դիտել Կաննում, այն կարծիքին էին, թե ֆիլմը կարելի է ցուցադրել Թուրքիայում, այն պայմանով, որ կրճատվեն բռնաբարության երկու տեսարաններ... Ըստ այդ թուրքերի, սա արդեն չափից դուրս է, քանի որ իրենց երկրում, որտեղ ռազմական վարչակարգ էր, համազգեստ հագած մարդիկ չէին կարող այդպիսի բաներ անել: Նրանց մեկնակետերն այն էր, որ բռնաբարում էին գյուղացիներն ու քրդերը, իսկ թուրքական բանակը չէր կարող նման արարքներ թույլ տալ: Մինչդեռ ֆիլմի բոլոր դեպքերը վավերական են ու բազմաթիվ որոնումների արդյունք: Վանեցիների հագուստից սկսած՝ բոլոր մանրամասները հավաստի են:

Փաստարկները

Մենք փաստարկների ու երեւակայության կարիք չունենք, որպեսզի պատկերացնենք, թե ինչ է կատարվել: Մեր ընբռնողությունը պետք է բավականաչափ զորեղ լինի՝ իրեղեն ապացույցներ ունենալու անհրաժեշտությունից վեր ելնելու համար: Բայց խնդիրը դա չէ: Մենք ապրում ենք ոչ թե հոգետր, այլ նյութական ափխարհում: Ուստի նրանք, ովքեր հոգեպես դատարկ են, փնտրում են փաստարկներ, որոնք կարող են լինել փողը, ինչպես իմ «Լուսավոր գալիք» ֆիլմում, կամ քաղաքական ճանաչումը:

Ապացույցները

Մեր դրամայի առանցքը այն մտայնությունն է, թե լուսանկարչական ապացույցներ չկան, որ ցուցադրենք: Բայց սա կեղծիք է, պատկերներ կան: Թուրքերը մեզ մեղադրել են, թե դրանք գեղծել ենք, ռետուշել: Եթե ես գինիկ լինեի, ուղղակի կասեի, որ այդ լուսանկարները այնքան էլ պիտանի չեն, քիչ բան են ասում մարդկանց: Համենայն դեպս, մշակութային առումով, մեր վերաբերմունքը լուսանկարների հանդեպ տարօրինակ է: Ահա թե ինչու, ինձ կարետր էր թվում պատմությանը մասնակից դարձնել մի լուսանկարչի եւ Արշիլ Գորկու ու իր մոր լուսանկարը: Ես գիտակցում եմ, թե դա ինչ հուզական ներգործություն կունենա էկրանին ցուցադրվելիս: Նույն տպավորությունը կգործի, ինչ գաղթականների թափորը առաջին անգամ տեսնելիս, քանի որ միանգամից տեսանելի է դառնում այն, ինչ մինչեւ օրս չենք պատկերացրել:

Հուզականությունը

«Արարատը», շատ առումներով, ավելի հուզական է, քան իմ մյուս ֆիլմերը, ինչի համար էլ արժանացա այն լրագրողների ճնշադատությանը, ովքեր նախկինում գնահատում էին ոմս: Նրանց կարծիքով, այս ափխատանքը բնորոշ չէ ինձ: Սա այնքան էլ պարզ չէ ինձ համար: Որոշ տեսարաններ լիովին համահունչ են այն ամենին, ինչ արդեն արել եմ նախկինում:

Խորհրդավոր ուժը

Ցեղասպանությունն ու հայկական մշակույթը իմ շատ ֆիլմերի թեմաներից են, բայց արծարծվել են որպես անհատների կյանքում գործող խորհրդավոր ուժ: Իսկ այստեղ, անհրաժեշտության բերումով, ավելին եմ ասել:

Ռոբեր Քեշիշյան. «Արամի» պարադոքսը

Ընդհանուր առմամբ, ձեր ֆիլմի հերոսը՝ Արամը, Ղարաբաղում մարտնչած ֆրանսահայ է: Նա այն մարդն է, որը դուք կուզենայիք լինե՞լ:

- Արամն այն հերոսն է, որը կուզենայի լինել, բայց չեմ: Ես կռիվ չգնացի, որովհետեւ խոսք էի տվել ծնողներիս, որոնք արդեն կորցրել էին իրենց երեք որդիներին: Այո, Արամը հենց այն կերպարն է, որ ես կուզենայի լինել: Բայց օբյեկտիվ պատճառներով ի վիճակի չեմ եղել ու չեմ կարողացել լինել: Իմ նկարագրած հերոսը հակապատկերս է: Հայրս կարող էր հրաժարվել ինձնից, բայց չի հրաժարվել: Արամը հենց հորս անունն է: Իմ ֆիլմը նվիրված է նրան, ինչպես եւ ամբողջ ընտանիքիս: Ես ընտրեցի այդ վերնագիրը, որովհետեւ երբ հայրս ու հորեղբայրս եկել են Թուրքիայից, որբ են եղել: Նրանք ափխատել են հանքերում, դաստերում եւ հաստատվել Առլում: Արամ անունով հայ լինելը Առլի նման փոքր քաղաքում՝ երկրորդ ափխարհամարտից առաջ, պատկերացնում եմ, շատ դժվար է եղել:

- Արամի մասին խոսելիս դուք հմայված եք երեւում ձեր հերոսով, թեեւ միաժամանակ նրան կողքից եք նայում: Ինչն է ձեզ այդքան գրավում նրա կերպարի մեջ:

- Արամն իմ որդիական սիրո եւ իր մեջ կրող մարդկության մի մասնիկի կատարյալ համակցությունն է: Միեւնույն ժամանակ նա այն բոլորի համընդհանուր հերոսն է, ովքեր այս պահին ժողովուրդների պայքարին առնչվող քաղաքական մարտեր են մղում: Արամը ազատագրական պատերազմի հերոս է, ճնշվածների պայքարի առաջամարտիկ, հղում Մանուշյանին: Նա, իրոք, հայ է: Բայց ես նույնքան հարգանք եմ տածում Մոնթե Մելքոնյանի, որքան Չե Գեւարայի, էմանյուել Դ'Ասյե դը Լավիժերիի կամ Հո Շի Մինի նկատմամբ... Այս մարդիկ ոտքի են ելել ժողովուրդների շահագործման, գաղութացման եւ անարդարության դեմ:

- Իհարկե, բայց ձեր հիշատակած արգենտինացի Չե Գեւարայի պայքարը նույնը չէ, ինչ հայինը: Թվում է՝ դուք ավելի շատ հայրենասիրական ընտրություն եք կատարել, քան զուտ քաղաքական: Դա չի կարող պատահականություն լինել...

- Ես երբեք չեմ կտրվել իմ պատմությունից: Ինձ խորապես ֆրանսիացի եմ զգում, բայց եւ՝ նույքան հայ: Ես զերծ եմ նրանց կուրությունից, ովքեր մերժում են իրենց անցյալը: Երբ հետաքրքրվում ես ընտանիքիդ, հետեւաբար եւ համայնքիդ պատմությամբ, անխուսափելիորեն ինքդ քեզ հարցնում ես Ֆրանսիայում հաստատվելու պատճառների մասին: Արամը հայ ֆիդայու պատկերն է, այն տղամարդկանց ու կանանց պատկերը, ովքեր ընդդիմացել են քրիստոնյա ժողովուրդների եւ հատկապես հայերի մշտական, դարավոր ճնշմանը Օսմանյան կայսրությունում: Երբ մտածում ես, որ մեր հողերն այլեւս Հայաստան չեն կոչվում... Պատճառ չեմ տեսնում, թե ինչու Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Ասիայի բոլոր ազատագրական պատերազմները պատշաճությամբ անցյալի մեջ խորամուխ լինելով՝ ես չպետք է խոսեմ համընդհանուր բաների մասին՝ իմ առանձնահատկության վերապահմամբ. Ռոբեր Քեշիշյանը հայ է: Բավական է ինձ հարց տամ, թե որն է հայերի պատմությունը, որպեսզի իսկույն մտաբերեմ այս ժողովրդի մղած պայքարը:

- Բայց ձեր առաջին ֆիլմը նկարահանվել է բացառապես հայկական թեմայով: Կարծես հայկականությունը ավելի զորեղ է եղել, քան մնացածը:

- Ոչ, ավելի զորեղ չէ: Ես կանգնած եմ պարադոքսի առաջ, բայց այդ պարադոքսն ինձ շատ է դուր գալիս: Արամը՝ որպես կերպար, չէր կարող ստեղծվել, հղացվել այլուր, բացի Ֆրանսիայից: Երկու մշակույթների միակատար խառնուրդը միայն ինձ հնարավորություն տվեց ստեղծել այս հերոսին:

- Ո՞ւմ է նրա առանձնահատկությունը:

- Շատ քիչ ֆրանսահայեր կան, որոնք մասնակցել են ղարաբաղյան պայքարին: Արամը բացառիկ է: Ես ցանկացել եմ դիմել ինքս ինձ ու գուցե նաեւ մեր համայնքին... Արամը փոքր-ինչ Մոնթե Մելքոնյանի դիմագիծն ունի, հոգետր եւ քաղաքական մտմտոքի մեջ է, նա թույլ չի տալիս, որ ժողովրդավարությունն ու Ֆրանսիայում ապրելու բախտը կլանեն իրեն, «խելքը տանեն»: Ես ուզում էի ասել, որ հայերի մեջ էլ նման մարդիկ կան: Արամը բռնություն չի սիրում: Նրան վիճակված է այն մարդու ճակատագիրը, որը դաժան չէ, բայց չի կարող խույս տալ իր պարտավորություններից: Հայկական ահաբեկչության պատմության մեջ ինձ դուր է գալիս, որ այդ մարդիկ բոլորը կամ գրեթե բոլորը նման են իրար: Երբ նրանք որոշել են կռվել, ծրագրել են հատուկ մահափոր, ոչ թե՝ ինչ ասես ձեռնարկել:

- Դուք նկարահանել եք «սեւ» ֆիլմ՝ ընտանեկան դրամայի հենքի վրա: Երկուսն էլ այնպես են միահյուսված, որ հարց է ծագում, թե նոր կինեմատոգրաֆիական ժանր չե՞ք ստեղծել:

- Ես հաջածանոթ եմ Չանդլերի, Հեմեթի, Այրիսի, Գոտիսի՝ «սեւ» վեպի բոլոր վարպետների գործերին: Իմ մանկությունն անցել է նրանց գրքերը կարդալով: Սիրում եմ այդ գրականության ոճբերգական լակոնիզմը, բառերի խնայողությունը: Ինքս ինձ ասացի՝ իսկ ինչո՞ւ չօգտագործեմ սեւ վեպի եւ ֆիլմի ձեւը քաղաքական ֆոնին ծավալվող ընտանեկան դրամայի համար: Նոր ժանր եմ հորինել: Ի վերջո, եթե պատուճանները մի կողմ թողնենք, «Կնքահայրը» եւս ընտանեկան դրամա է:

- «Արամի» գործողությունը դրսում հաճախ ծավալվում է երեկոյան...

- «Սեւ» ֆիլմում ինձ դուր է գալիս այն, որ ժանրն ընդունել է էքսպրեսիոնիզմի էսթետիկան եւ գործում է մանիքեիզմի սկզբունքով. չարը ներկայացնում է սեւը, իսկ բարին՝ սպիտակը: Ես հակառակն եմ արել: Արամը պարուրված է սեւով: Ֆիլմ Մորիսոնի տեքստերից մեկում ասված է. «Ինչպես ցերեկն է ճեղքում գիշերը, այնպես էլ գիշերն է կործանում ցերեկը»: Իմ կարծիքով, սա շատ ճիշտ է, եթե նույնիսկ դրամայի ցերեկն է կատարվում, սողվում է գիշերով, անկեղծությամբ, ինչ-ինչ բաներ չիանում են, գույները՝ անհետանում: «Սեւ» ֆիլմում լույս ու սվերի խաղը չի ձգտում հավասիության: Առավել եւ՝ իմ ֆիլմում: Ես ցանկացել եմ գույնի մեջ հասնել սեւ ու սպիտակի ընկալման: Ինչ վերաբերում է գիշերվան, դա խորհրդանշում է ողբերգությունը:

- Ֆիլմի սկզբում ականատես ենք թուրք ծայրահեղականների մահվանը Փարիզի կամուրջներից մեկի վրա: Իսկույն կարելի է մտաբերել Բիր Հաքեմի մահափորձը 1975-ի հոկտեմբերին...

- Ցարժե պահմտոցի խաղալ: Մի անգամ ես հեռուստացույցով լսեցի, որ մի հայկական կազմակերպություն Ֆրանսիայում, Բիր Հաքեմի կամրջի վրա մահապատժի է ենթարկել Թուրքիայի դեսպանին: Մնացի ապշած: Այդ դեպքը շատ խորն է դրոշմվել իմ մեջ: Եվ ես որոշեցի ֆիլմն սկսել այդպես, քանի որ դա խորհրդանիշ է:

- «Արամը» էկրան բարձրացավ սեպտեմբերի 11-ից եւ մի շարք այլ հանցագործություններից հետո: Նման ֆիլմը այսօր ձեզ պատե՞ճ է թվում:

- Պետք է բառի իմաստը տարբերակել: Չի կարելի բոլոր ահաբեկչությունները նույն արշինով չափել: Գերմանական օկտոպացիայի օրոք Մանուշյանի խմբին էլ էին համարում ահաբեկիչներ, եւ նրանց լուսանկարները փակցված էին Ֆրանսիայի բոլոր պատերին: Այսօր էլ դիմադրության մասնակիցներ կան: «Հագանա» բրիտանացիների համար ահաբեկիչներ էին, բայց Իսրայել պետությունը կազմավորվելիս՝ հերոսներ: Քաղաքական գործիչները, մտավորականները, լրագրողները երբեք այնքան հաջություն չունեն, որպեսզի ահաբեկչություն որակված այդ գործողությունը տեղադրեն պատմության շրջանակներում՝ բոլոր հանգամանքները ճշտելու համար: Ես չեմ կարող հայ ակտիվիստներին կոչել նույն կերպ, ինչ Բեն Լադենին եւ աջ ծայրահեղականներին: Ըստ էության, ինչ է ահաբեկչությունը: Չգիտեմ: Ասենք, այս բառը հիմնավորված է որոշ շարժումներ բնորոշելու համար, որ այդպիսին են, բայց դժվար չէ եւ մատնացույց անել մյուսները, որ այդպիսին չեն: Բարբարոսությունը ստրկվում է օրինական պայքարի հետ:

- Ուրեմն ձեզ չի՞ թվում, որ «Արամը» անպատեհ ժամանակ է էկրան բարձրացել:

- Չեմ կարծում: Նախ՝ ես հոգ եմ տարել, որ ֆիլմում մանիքեական չլինեմ: Այն մարդիկ, ում մասին պատմում եմ ֆիլմում, պատկանում են աջ ծայրահեղականներին. խոսքը «Գորշ գայլերին» է վերաբերում: Այս անձինք կարող են սպանություններ գործել, ահաբեկել, ծեծել... Սա իրականում գաղտնի ծառայությունների զինված ձեռքն է, նրանք ամենուրեք օգտվում են հանցակիցների աջակցությունից... Ես Միսաք Մանուշյանի նման եմ, ոչ թե թուրք ժողովրդին եմ պատասխանատու համարում անցյալի համար, այլ թուրքական տարբեր կառավարություններին: Դրանք են կրում պատասխանատվության բեռը: «Արամը» հակաթուրքական ֆիլմ չէ: Մի բան կասեմ. այս կինոնկարն ինձ թվում է ճիշտ ժամանակին, որովհետեւ հնարավորություն է ընձեռում թուրք ժողովրդավարներին մտորել անցյալի մասին: Որքան շատ մտորեն, այնքան գործն ավելի առաջ կընթանա մեզ համար:

Մրցութային ծրագիր

ՈՍԿԵ ԾԻԲԼՆ

GOLDEN APRICOT

Համլետ Սարգսյանի «Camera obscura»-ն

Համլետ Սարգսյանի «Camera obscura» ֆիլմը, արդեն ցուցադրվել է 16 երկրներում:

Հայաստանում ծնված Համլետ Սարգսյանը նախ սովորել է Լենինգրադի թատրոնի, երաժշտության ու կինոյի ինստիտուտում: Նրա «Ճանապարհը» ժապավենը Լենինգրադի կարճամետրաժ ֆիլմերի փառատոնում 1989-ին արժանացել է առաջին մրցանակի: 1990-ին տեղափոխվել է Մ. Նահանգներ եւ ուսանել Հոլիվուդի Կոլումբիա քոլեջում, որտեղ արված ավարտական աշխատանքը՝ «Կոնկրետ դրամա» ֆիլմը, 1993-ին արժանացել է Կոլումբիայի կինոփառատոնի առաջին մրցանակին: 1996-ին ավարտել է ամերիկյան կինոինստիտուտը, մի քանի կարճամետրաժ ֆիլմերից բացի, բեմադրել է բալետ, օպերա եւ դրամատիկական ներկայացում: «Camera obscura»-ն նրա առաջին լիամետրաժ խաղարկային ֆիլմն է եւ չորրորդ կինոստեղծարը:

Կինոռեժիսորը երեկ մասնակցում էր կինոփառատոնի մասնակիցների հետ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում անցկացվող հերթական մամլո ասուլիսին: Հենց այնտեղ էլ զրուցեցինք փառատոնում ցուցադրվող նրա ֆիլմի եւ առհասարակ կինոարվեստի խնդիրների մասին:

- Ֆիլմը երբեւէ ցուցադրվե՞լ է Հայաստանում, եւ ի՞նչ նոր բան եք կամեցել ասել կինոհանդիսատեսին:

- Երկու տարի առաջ Երեւանում հատուկ ցուցադրություն եղել է ֆիլմի կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի պատվին: Այնպես որ, ֆիլմն այստեղ պատշաճաչափ ցուցադրվում է առաջին անգամ: Իմ անդրանիկ ֆիլմն է, արված «ֆիլմ նուար»-ի ժանրով, որ նշանակում է «սեւ ֆիլմ»: Կինոշխարհում շատ տարածված ժանր է եւ Մ. Նահանգներում բավական ընդունված: Շատերն են իրենց առաջին ֆիլմերն այդ ժանրով նկարահանում: «Camera obscura»-ն պատմում է ոստիկանության հետ աշխատող լուսանկարչի մասին, որը երկար ժամանակ մահվան տեսարաններ լուսանկարելուց հետո սկսում է մերժել մահը, լուսանկարները գեղեցկացնելով այնպես, կարծես դրանցում մահ չէ պատկերված: Նկարահանվել են հիմնականում ամերիկացի դերասաններ: Ես գոհ եմ ֆիլմի արձագանքներից, որ շատ դրական էին:

- Ամերիկայում կամ այլ երկրներում բնակվող հայ ռեժիսորների հետ կապեր ունե՞ք, թե՞ աշխատում եք մենակուտ:

- Ամերիկայում նոր-նոր է ստեղծվել մի կազմակերպություն, որը փորձում է միավորել ամերիկյան հայ կինոգործիչներին: Ասում էգոյանի հետ միայն վերջերս եմ ծանոթացել, իսկ այս փառատոնում նորերի հետ ծանոթացա եւ գոհ եմ, որ հնարավորություն ունեմ դիտելու Հայաստանում վերջին տարիներին ստեղծված ֆիլմերը: Հայ կինոռեժիսորները պետք է գտնեն միմյանց, դիտեն մեկը մյուսի ֆիլմերը եւ հայ կինոն առաջ տանեն: Հայկական թեման աշխարհին ճանաչելի դարձնելու համար նախ պետք է անում ձեռք բերենք, որպեսզի հեշտանան ֆինանսավորվելու ու կինոհանդիսատես ունենալու խնդիրները:

Ես անձամբ կամենում եմ ֆիլմ նկարել Հայաստանի մասին, սակայն դրա համար մեծ միջոցներ ու աջակցություն է պետք: Ֆիլմերը ֆինանսավորվում են դերասաններով, իսկ մենք համաշխարհային բեմի վրա չունենք այնպիսի դերասաններ, որոնց անունն արդեն փող բերի, շատ քիչ են նաեւ հայ պրոդյուսերները: Հայաստանի մշակույթի նախարարությունն ու կինոյի ճակատագրով զբաղվող հասարակական միությունները սփյուռքի հետ պետք է անպայման դնեն հայ կինոն զարգացնելու հարցը, որպեսզի արտասահմանում ապրող հայ ռեժիսորներն իրենց օտարված չզգան եւ ցանկություն հայտնեն հայրենիքում ֆիլմ նկարելու:

Փելեշյանի նման մեծանուն ռեժիսորն այսօր ֆիլմ չի նկարահանում, որովհետեւ նրա գործերը կոմերցիոն չեն, շահույթ չեն բերում: Դեռ ավելին, կարծիք են ստեղծել, թե նրա հետ աշխատելը ծանր է, իսկ մյուս կողմից, պետական մատնանշություն չկա նրան տեր կանգնելու: Հայաստանի կառավարությունը պետք է Փելեշյանին օգնի ստեղծագործելու, որովհետեւ նա յուրահատուկ արվեստագետ է եւ հայ ազգի հարստությունը: Փարաջանովի հանդեպ ակնածանք տածելու եւ մեծարելու հետ մեկտեղ պետք է տեր կանգնել արդեն անուն ունեցող եւ նոր ստեղծագործող երիտասարդներին:

- Իսկ նոր ֆիլմի մասին մտածո՞ւմ եք:

- Իմ երկրորդ ֆիլմը կկոչվի «Ամպամած արեւտը», որը ժանրային ֆիլմ չէ, այլ սիրո պատմություն, որովհետեւ Մ. Նահանգներում ապրելով տեսնում եմ, որ սիրո պատմություններ նկարահանելը շատ անհրաժեշտ է, ժամանակն է, որ այնտեղ նման կինոնկարներ ստեղծվեն: Ֆիլմում նկարահանվելու են հայտնի դերասաններ, հավանաբար նկարահանումները կսկսեմ աշնանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԱԽԱՇԵՄԻՆ

Սա այն ֆիլմերից է, որ հանդիսատեսից մեծ աշխատանք են պահանջում՝ մտավոր եւ հոգեւոր: Մարդկային հոգու անցնելիք ճանապարհի կինոպատում է սա, նրա ներքին կյանքի՝ աշխարհիկ պայմանականություններից զերծ հոգու սյուժեն, նրա դիալեկտիկան: Որտե՞ղ ենք կռահում, իմաստավորում մեր ներքին կյանքի շրջադարձերը: Նախաշեմին գտնվելով՝ մարդը դեգերում է մենթալ, հոգեւոր տարածքներում ու գալիս ներումի շեմին: Մեծ իմաստություն կա այս ֆիլմում:

Հիրավի, զարմացնում է այն փաստը, որ չնայած ֆիլմի ստեղծումը տեւել է մոտ տասը տարի, դրանից չի տուժել նրա ամբողջականությունը, թեկուզ հենց ներգեղեցիկ առումով: Պատկերաշարից բացի, դրան մեծապես նպաստել է նաեւ Ավետ Տերտերյանի երաժշտությունը: Աշխատանքային ջանքերը հետք չեն թողել, այստեղ գերիշխում են Գոյի հաղթահարման ճիգերը, որ հերոսինն են, այսինքն՝ հեղինակինը, ընկած են նրա մտահղացման հիմքում: Արդյունքում ֆիլմ-միստերիան՝ իր տառապագին բովանդակությամբ հանդերձ, կլանում է, գերում իր մոգականությամբ, ոգեղենությամբ:

Հեղինակի՝ Լյուդմիլա Սահակյանցի հետ զրույցից. «Մարդու կողմից ամենահաճախ տրվող հարցն է՝ ինչո՞ւ, ինչի՞ համար: Երբ գալիս ես այդ հարցը, նշանակում է՝ ոչ մի պատասխանատվություն չես կրում, նույնիսկ Աստծո նշանակում է՝ ոչ մի պատասխանատվություն չես կրում, նույնիսկ Աստծո առաջ, այսինքն՝ չես հասկանում ներումը, ներման էությունը: Այնինչ միշտ կա, գոյություն ունի այդ ինչ-որ բանը՝ ինչի համար որ... Եվ երբ անցնում ես այդ ճանապարհը ու դժգոհելու, տրտնջալու կամ ինչ-որ մեկին մեղադրելու փոխարեն ինքդ քեզ համար գտնում ես պատասխանը՝ թե ինչի՞ համար, այդժամ ընդունում ես դասը, որ տրվել է քեզ: «Նախաշեմին»-ը ենթադրում է «այնտեղ» տանող եւ հետադարձ ուղին: Ինձ համար կարեւոր էր հետադարձ տեսանկյունը՝ «այնտեղից այստեղ»-ը: Բոլորս աշխարհ ենք գալիս, տառապում, բայց շատ բան գիտակցում ենք հեռանալու պահին: Կարեւոր է թվում այստեղ գտնվելու պահին հիշեցնել մեզ այն, ինչի մասին աշխատում ենք չմտածել, այն, ինչն, ըստ էության, կյանքի բանաձեւի մարմնացումն է. դրա համար ենք ծնվում՝ թե ինչպանով ենք հաղթահարում մեր հաղթանակները, յուրացնում մեր դասերը: Իսկ մոռանալով դրանք, տրտնջալով՝ նսեմացնում, փոքրացնում ենք մեր իսկ հնարավորությունները: Վախն Աստծո առաջ՝ դրա չափը պետք է գիտակցել, սովորել ընկալել նրա հետ, այդ մեծ ուսուցչի, օգնականի հետ: Ինչպես ասվել է. «Ոչ թե վախենալ Աստծուց, այլ նրան կորցնելուց վախենալ»:

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊԻՍՅԱՆ

Անակնկալի ռազմավարությունը

Հատված կինոռեժիսոր եւ գրող Վասիլի Քաթանյանի «Փարաջանով: Հավերժական տոնի գինը» հուշագրությունից

Ահա թե ինչ կարդացի մի մարդու վերաբերյալ (նրա անունը ժամանակավորապես թաքցնում եմ N տառի տակ), եւ ինձ աղբեցրեց, թե կարդացածս որքան է համընկնում այն ամենին, ինչ կարելի է գրել Փարաջանովի մասին:

«N-ին լավ ճանաչողի համար դժվար է նրա մասին անաչառ դատել: Լավ ճանաչել N-ին՝ նշանակում է նրան սիրել: Նրա պերճախոսության հմայքն ու փայլը չէին տեղավորվում սովորական շրջանակներում, իսկ տառապանքներն ու տագնապները առաջացնում էին բարեկամների կարեկցանքը: Ասում են, N-ի փայլը արհեստական էր, իսկ բանավոր պատմությունները վերածվում էին սերտած «համարների», որոնք նա փոխում էր ձայնագրակների պես: Հնարավոր է: Ոչ ոքի տրված չէ ամեն վայրկյան նորը դառնալ, դա կնշանակեր ինքնությունը կորցնել: Բայց այդ «համարը» հիացնում էր»:

Եթե «N»-ի փոխարեն գրենք «Սերգեյ Փարաջանով», կստացվի նրա դիմանկարը: Սերյոժան չէր ճանաչում այդ մարդուն եւ մինչեւ վերջին ժամանակները նույնիսկ անունը չէր լսել:

«N-ի ձիրքի բազմազանությունը երկար տարիներ ժամանակակիցներին խանգարում էր գնահատելու նրա ստեղծագործությունները: Այդ մարդու անհավասալի եռանդը, մարդ, որ կարողանում էր միաժամանակ բանաստեղծ լինել, դրամատուրգ, նկարիչ, զարմացնում ու տարակուսանքի էր մատնում շրջապատողներին: Սրանց համար դժվար էր հասկանալ, որ նման ցրվածությունը կարող է հանճարի դրսեւորման ձեւ լինել: Նրա ոգորումները շփոթեցնում էին այդքան համաթարափակ միտք չունեցող մարդկանց: «Ես ապրում եմ՝ լեգենդների թիկնոցով ծածկված», ասում էր նա՝ հենց ինքն էլ օգնելով այդ թիկնոցը հյուսել, քանզի համարում էր, որ դրա ֆոնի տակ անհատի գաղտնիքների գաղտնիքը դառնում է անտեսանելի: Նրա մասին ասում էին, թե Օսկար Ուայլդի նման հանճարեղ էր կյանքում եւ տաղանդավոր՝ ստեղծագործության մեջ: Ոչ, նա հանճարեղ էր իր գործերում, իսկ կյանքում ներդրել էր իր մեծ տաղանդը՝ գրեթե երեխայական անձնականության համակցությամբ, քանի որ միշտ մնում էր զարմացած ու ինքուր երեխա:

Կարիք կա աղբեցնել: Արվեստում՝ անկասկած: Շոկային բուժումը բացում է աչքերն ու հոգիները: Բայց շոկն իր բնույթով կարճատեւ է, եւ ոչինչ այնպես արագ չի անցնում, ինչպես նորությունը: Ավանգարդի արվեստը շատ շուտով դառնում է շատամ, եւ մտքերը նորից խորասուզվում են թմբիրի մեջ: Ահա թե ինչու, եթե ուզում ես այդ մտքերն արթնացնել, պետք է ամեն անգամ գտնել անսպասելի ուղղությամբ եւ անդադար թարմանալ: Այդպես N-ը բնազդաբար կռահել էր անակնկալի ռազմավարությունը»:

Եվ վերջապես.

«Նա պատկանում էր այն մարդկանց ցեղին, ովքեր ամբողջ կյանքում դատվում են մանկության կնիքով: Կախարդական աշխարհը, որտեղ նրանք ապրում են, պահպանում է նրանց տարիների հետ վրա հասնող դաժանացումից: Նրանք մյուսներից շատ են տառապում մեծահասակների աշխարհի անողոքությունից եւ մինչեւ ծերություն երազում են մայրական ջերմությունից տաքացած սենյակի մասին, որտեղ կարող էին հարմարավետ կծկվել՝ շոշը հավաքելով իրենց խաղալիքներն ու սիրելիներին»:

(Ահա թե ինչու, կարծում եմ, Սերյոժան ոչ մի կերպ չէր կարողանում բաժանվել հայրական բնից, չնայած նորակառույցի հարմարավետության բոլոր հրապույրներին):

Եվ այսպես, նրանց համար, ովքեր չգուշակեցին. ամբողջ վերոհիշյալը Անդրե Մորուան է գրել Ժան Կոկտոյի մասին:

Իսկ եթե խոսք բացվեց Կոկտոյի մասին, չեմ կարող մի հատված չբերել Մադրիդում Պիկասոյի ցուցահանդեսի բացման առթիվ նրա արտասանած խոսքից.

«Պաբլոն հանճարեղ հնահավաք է: Հենց որ նա դուրս է գալիս տնից, սկսում է ամեն ինչ հավաքել ու բերել արվեստանոց, որտեղ ցանկացած իր սկսում է ծառայել նրան՝ դասվելով նոր, բարձր կարգի»:

Մի՞թե սա Փարաջանովի մասին չէ: Նա էլ էր տնից դուրս գալուն պես աղբակույտերը տնտղում եւ դրանց միջից հանում այնպիսի բաներ, որոնց կողքով մենք ջանում են շուտափույթ անցնել: Բայց «մոգական հրամանները նրա մատների» այդ ամենը փոխակերպում են արվեստի ստեղծագործության:

Փարաջանովի ֆիլմերի հետահայաց ցուցադրության հետ մեկտեղ փառատոնի մրցույթում ընդգրկված են Գեորգի Փարաջանովի «Ես մահացել եմ մանուկ ժամանակ» եւ Արման Ավետիսյանի «Փարաջանով. անունով հեքիաթը» ֆիլմերը, իսկ արտամրցութային ծրագրում՝ Լեւոն Գրիգորյանի «Օրիորդը իջնում է դժոխք» ժապավենը:

Ասպիկա Օրերին

ՈՍԿԵ ԾԻԼԻՆ

GOLDEN APRICOT

ՌԵՏՐՈՍՊԵԿՏԻՎ

Փոքր մարդու մեծությունը

Մի հարցազրույցում Շառլ Ազնավուրը խոստովանել է. «Ինձ միշտ գրավել են կյանքի հորձանուտում կորույալ, սոցիալական աստիճանակարգման անխախտ օրենքների դեմ անօգնական փոքր մարդիկ: Այդպիսիք են իմ շատ երգերի հերոսները»: Այդպիսիք են եւ Ազնավուրի կինոհերոսներից շատերը: Փոքր մարդկանց այդ դիմաբարը, որ 1959-ին բացեց Ֆրանսիայի «Գլխով՝ պատին» ֆիլմը, դեռ 60-ականներին համալրվեց Տրյուֆոյի «Կրակեք դաշնակահարի վրա», Կայատի «Հոեռնոսի անցումը», Լա Պատելյերի «Թոքրում գնացող տխմին», Բեռնար-Օքերի «Փոստատարը գնում է պատերազմ» եւ այլ ժապավենների: Այդ տարիներից ի վեր Ազնավուրի անունը կապակցվել է «կյանքից արտաբեկ, համեստ ու անհամարձակ» հակահերոսի հետ, որը հարմարված չէ իրեն պարտադրող խաղի կանոններին, ուստի ճակատին դատապարտվածության նույն դրոշմն ունի: Փոքր մարդու ողիսականը տանջվող տվողի ճակատագիրն է, կարմրաթեկ ծաղրածուի բախտը, որ աղտակներ է միայն վաստակում: Նա հաղթողների դասից չէ, ուրեմն չի կարող փրկվել: Փոքր մարդը պարտվում է այն խաղում, որ պիտի շահեր: Ազնավուրին ճիշտ կլիներ դասել այն արվեստագետների շարքը, որոնք շարունակ անդրադառնում են միեւնույն մարդկային բնավորությանը: Բայց ո՞րն է փոքր մարդու հանդեպ այս մտասեւեռ ուշադրության ազդակը:

Ազնավուրի արվեստը խոստովանական հիմք ունի: «Իմ երգերը խոստովանություններ են»,- ընդգծում է նա: Փոքր մարդու թեման ի հայտ է բերում նրա ստեղծագործության կենսագրական ասպեկտը եւ այս առումով, հոգեհարազատ է նրան, «ինչպես իր միսն ու արյունը»: Ազնավուրի անցած ուղին, որի «անբաժան ընկերները», իր խոսքերով, «խաղը, ցուրտը, հոգնածությունը, զարկած արցունքն» են եղել, փոքր մարդու Գողգոթայի ճանապարհն է: Հուշերի գրքում նա շնորհակալ է Աստծուն, որ իրեն «անցկացրեց բոլոր փորձությունների միջով, երգելու եւ այդ երգն արտելու հնարավորություն տվեց»: Սա նա իրական կյանքն է, մարդկային մի ճակատագիր՝ դրական նշանով: Արվեստի համար նախընտրելի է մյուս տարբերակը՝ այդ ճակատագրի միանգամայն հավանական մյուս երեսը՝ բացասական նշանով, երբ հերոսը պիտի անցնի «բոլոր փորձությունների միջով» կամ «երգելու եւ այդ երգն արտելու» հնարավորությունից զուրկ է: Բարեբախտ տարբերակը կյանքի համար է, որ, Աստծո կամքով, «չծրագրված» անակնկալներ կան: Չարաբախտ տարբերակը արվեստի ստեղծագործության նյութ է, որ, հեղինակի կամքով, «չծրագրված» անակնկալներ չկան: Ազնավուրին կարելի է համարել selfmade man՝ «մարդ, որ ինքն է ստեղծել իրեն», ինչպես ամերիկացիներն են կոչում այն հաջողակ մարդուն, ով իր դիրքի, ձեռքբերումների, հաղթանակի համար պարտական է ինքն իրեն, սեփական ջանադրությանն ու եռանդին: Մինչդեռ Ազնավուրի ձախողակ կինոհերոսը selfmade man-ի հակապատկերն է՝ looser, որ ոչ միայն տանջվել է տալիս, այլ ողբերգականորեն դատապարտված է պարտության: Արվեստագետի եւ նրա հերոսի ճակատագրերի այս հակասական փոխմիասնությունը, որ թվում է, թե ծայրերն ի մի չեն գալիս, երեւան է բերում նրա արվեստի կենսագրական բնույթը: Ազնավուրի արվեստը ոչ թե իր դրամատիկ կենսագրության արտապատկերումն է ըստ հարկին սրբագրված վերջանաբով, այլ այդ կենսագրության հոգեւոր փորձի գեղարվեստական արտացոլքը: Հենց այս հոգեւոր փորձն է Ազնավուրի իսկական «միսն ու արյունը», նրա ստեղծագործության մշտահոլով թեման, որ Օրսոն Ուելսի խոսքերով, «նշանակալից է այնքանով, որքանով արտահայտում է իր ստեղծողին»:

ՉԱՎԱՆ ԲՈՅԱՋՅԱՆ

ՏԵՂ ԵՐԿՐԻ ՎՐԱ

3 ՅՈՒԼԻՍ, «ՄՈՍԿՎԱ» կ/թ, կարմիր դահլիճ, ժ.10.00

2001, Ռուսաստան
Ռեժ. Արթուր Արիստակիսյան
Դերերում. Վ.Խաեւ, Ի.Գուսեւա, Ն.Գրիմաեւա, Ռ.Ասլասով:

Արդարասակարգայնացած երիտասարդների չարչարանաց պատմությունն է: Նրանք ապրում են մեր օրերում, Մոսկվայի կենտրոնի հիպիական համայնքում:

ՔԵՐԳՄԱՆԻ ՁԱՅՆԸ

3 ՅՈՒԼԻՍ, «ՆԱԻՐԻ» կ/թ, ժ.10.00

1997, Շվեդիա:
Ռեժ. Գունար Բերգդալ:

Այս փաստագրությունը մի խորունկ ճամփորդություն է դեպի բոլոր ժամանակների ամենամեծ կինոռեժիսորներից մեկի սիրտը, ինֆորմացիայի եւ ներշնչանքի մի անհուն աղբյուր:

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

4 ՅՈՒԼԻՍ, «ՆԱԻՐԻ» կ/թ, ժ.14.30

2003, Ռուսաստան
Ռեժ. Ալեքսանդր Սոկուրով
Դերերում՝ Ա.Շչեգինին, Ա.Նեյմիշեւ, Ա.Ռազբաշ, Ֆ.Լավրով, Մ.Զասուխինա:

Մի փոքրիկ ընտանիք՝ հայր եւ որդի, ապրում են հին շենքի վերեւի հարկում: Հայրը չի պատկերացնում իր կյանքն առանց որդու, որդին էլ, իր հերթին, անկեղծ սիրով կապված է հորը: Նրանց սերը գրեթե առասպելական բնույթի է: Իրականում այդպես չի լինում, դա հեքիաթային իրավիճակ է: Ֆիլմը շարունակում է ռեժիսորի՝ ազգակցական կապերին նվիրված շարքը:

ՀՇՏԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ «ՇՂԵԼՊԵՐԻ» ՄԱՍԻՆ

3 ՅՈՒԼԻՍ, «ՄՈՍԿՎԱ» կ/թ, կապույտ դահլիճ, ժ.18.30



2003, Ռուսաստան
Ռեժ. Ալեքսեյ Մուտադով
Դերերում. Կ. Տուկաեւ, Ա. Շլյամին, Լ. Օկունեւ:

Մտերիմ ընկերները հանդիպում են տարիներ անց: Նրանք երգում են հարազատ խաղում, եւ յուրաքանչյուր հանդիպում մի-մի էջ է անցյալից: Իսկ նրանք չեն սիրում իրենց անցյալը: Ոչ իրականությունն է գեղեցիկ, ոչ երջանացող աշխարհն է նրանց սիրում: Տղաները ընկնում են տարբեր արկածների մեջ՝ մերթ ծիծաղելի, մերթ սարսափելի, եւ նրանց արարքները երբեմն անմիտ են, երբեմն՝ ազնիվ:

ԱՄՆՇԻՐԻՄ ԵՐԿԻՐԸ

3 ՅՈՒԼԻՍ, «ՄՈՍԿՎԱ» կ/թ, կարմիր դահլիճ, ժ.16.00

1991, ԱՄՆ-Չեխոսլովակիա
Ռեժ. Արա Մաթունյան, Պավել Ստինգլ

Խորհրդային Հայաստանի բնակիչները կասկածով են վերաբերվում Մոսկվայի ձեռնարկած միջոցներին՝ փրկելու Բախի հայերին կոտորածից:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ ՕԴՆ Է, ՈՐԸ ՇՆՉՈՒՄ ԵՄ

3 ՅՈՒԼԻՍ, «ՄՈՍԿՎԱ» կ/թ, վիդեսրահ, ժ.14.00

1994, Նիդեռլանդներ
Ռեժ. Քարի դե Սվաան:

Փաստագրություն ավանգարդիստական երգարվեստի աշխարհահռչակ երգչուհի Քեթի Բերբերյանի մասին:

ՁԱՔ ՊԱՏԻ ՎՐԱ

3 ՅՈՒԼԻՍ, «ՆԱԻՐԻ» կ/թ, ժ.14.30

2003, Շվեդիա
Ռեժ. Ջիմի Կառլսոն
Դերերում՝ Մ.Ջրեփեր, Ս.Գուդնասոն, Յու.Լազցանո Օսթերման, Ա.-Ս.Ռեյս, Թ.Փեթերսոն, Ա.Փալմ:

1981 թվական: Արդեն անցել են 70-ական թվականները՝ համերաշխության, մեծ ցույցերի ժամանակը: 33-ամյա Լարս Հերդինը հրաժարվում է ավարտել մաթեմատիկայի ատենախոսությունը Ուփսալայի համալսարանում:

ՀԵՔԻԱԹ ԹԵՎԱՎՈՐ ՁԻՈՒ ՄԱՍԻՆ

4 ՅՈՒԼԻՍ, «ՄՈՍԿՎԱ» կ/թ, կարմիր դահլիճ, ժ.10.00

2002, Հայաստան
Ռեժ. Արմեն Խաչատրյան:

Ֆիլմը, որի հերոսուհին է դարձել դերասանուհի Սոֆիկ Սարգսյանը, պատմություն է կորսված ժամանակի եւ չիրականացված երազանքների մասին:

ԵՍ ՄԱՀԱՑԵԼ ԵՄ ՄԱՆՈՒԿ ԺԱՄԱՆԱԿ

4 ՅՈՒԼԻՍ, «ՆԱԻՐԻ» կ/թ, ժ.09.30

2004, Ռուսաստան
Ռեժ. Գեորգի Փարաջանով

Սերգեյ Փարաջանովի երջորդին ներկայացնում է իր հանճարեղ մորեղբորը՝ նրա բանտային նամակների հիման վրա:

ԳԻՇԵՐԸ ԼՈՒՍԱՎՈՐ Է

4 ՅՈՒԼԻՍ, «ՆԱԻՐԻ» կ/թ, ժ.19.00

2003, Ռուսաստան
Ռեժ. Ռոման Բալայան
Դերերում՝ Ա.Կուզիչեւ, Ա.Պանին, Օ.Սուսուլովա, Ի.Կոտոչենկո, Վ.Գոսյուխին:

Գիշերը կարող է լուսավոր լինել անգամ կույրերի համար, եթե ինչ-որ մեկը դա շատ ցանկանա: Ֆիլմը պատմում է կույր խուլուհամրերի ինտերնատ-բուժարանի դրամատիկ առօրյայի մասին: Պատմության հիմքում երկու հերոսուհիների՝ տնօրենի և պրակտիկանտուհու բախումն է:

Ա ԲՈՎՀԵՏԵՎ ԻՆՉՈՒ

3 ՅՈՒԼԻՍ, «ՆԱԻՐԻ» կ/թ, ժ.09.30

1993, Կանադա
Ռեժ. Արթո Փարագամյան
Դերերում՝ Մ.Ռայլի, Դ.Բանդոլ, Մ.Ռոշոն, Հ.Մաթիսոն, Վ.Նայթ, Հ.Համ:

Հինգ տարի արտասահմանում ճամփորդելուց հետո Ալեքսը վերադառնում է Մոնրեալ: Նրա ունեցածը մի ուսապարկ է եւ մի կտոր թուղթ, որի վրա գրված է նախկին ընկերուհու հասցեն: Երբ պարզվում է, որ այդ հասցեում գտնվող շենքը քանդված է, Ալեքսն իրեն զգում է կորսված:

Ներդիրը պատրաստեցին
ՉԱՎԱՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ եւ ՄԻՔԱՅԵԼ ԳԱԼՍՏՅԱՆԸ

ԲԱԳԴԱԴ

«Դատարանում Սադդամ Հուսեյնը թեեւ հյուծված էր, բայց անխռով եւ հպարտ»

Վկայեց թուրքական հանրային հեռուստատեսությունը

Հունիսի 28-29-ը Ստամբուլում գումարվեց ՆԱՏՕ-ի գագաթաժողովը: Գումարման օրը, առավոտյան Պոլ Բրեմերի գլխավորած օկուպացիոն վարչակազմը նախատեսվածից երկու օր շուտ իր լիազորությունները հանձնեց Իրաքի ժամանակավոր կառավարությանը, որը գլխավորում է Իյադ Ալլաուին: Այդ ընթացքում Բաղդադ ժամանեց Իրաքում ԱՄՆ նորանշանակ դեսպան Ջոն Նեգրոպոնտեն եւ վերահաստատվեցին դեռեւս 1990-ին խզված դիվանագիտական հարաբերություններն ԱՄՆ-ի եւ Իրաքի միջեւ:

Մինչ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը Բաղդադում իշխանափոխության առնչությամբ ողջունում էր Իրաքի վերադարձն անկախ եւ ինքնիշխան պետությունների ընտանիք՝ հորդորելով իրաքցիներին համախմբվել երկրի ժամանակավոր կառավարության շուրջ, հունիսի 30-ին ամերիկյան զինվորական հրամանատարությունը իրաքցիներին հանձնեց Սադդամ Հուսեյնին եւ նրա վարչակազմի 10 անդամներին: Հուլիսի 1-ին Իրաքի նախկին բռնապետը նստեց ամբաստանյալի աթոռին:

Թուրքական հանրային հեռուստատեսությունն, անդրադառնալով դատավարության առաջին նիստին, նշեց, որ «Սադդամը թեեւ հոգնած էր, սակայն անխռով էր եւ հպարտ»: Ինչո՞ւ: Նախեւ հարցին պատասխանելը նշենք, որ դատարանը Սադդամին էր ներկայացրել հետեւյալ 7 մեղադրանքները.

1998-ին Հալաբջայում քիմիական զենքի օգտագործմամբ 5 հազար քրդի ոչնչացում,

1991-ին շիաների ընդվզման ճնշումը բիրտ ուժով,

1991-ին Պարսից ծոցի պատերազմի ընթացքում զանգվածային սպանություններ,

1980–88 թթ. իրանա-իրաքյան պատերազմի սանձազերծում,

1990-ին Քուվեյթի զավթում,

1980-ին Բարզանիի աշիրաթի անդամների սպանություն,

1980–99 թթ. Իրաքում շիա հոգեւոր առաջնորդների հետ հաշվեհարդար:

Սադդամը ներկայացված մեղադրանքները մերժել է, եւ արդարացրել Քուվեյթի զավթումը, պատճառաբանելով, թե քուվեյթցիներն այլասերում էին իրաքցի կանանց, ապա եւ զայրացած գոռացել. «Ինչպե՞ս կարելի է պատշաճանել այդ շներին»: Երբ դատավորը փորձել է հիշեցնել նրան, որ գտնվում է դատարանում, նա պատասխանել է. «Ես Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնն եմ: Այս դատն ընդամենը թատերական ներկայացում է: Դու ինչ իրավունքով ես ինձ դատում»: Այնուհետեւ Իրաքի նախկին բռնապետը նշել է, որ բուն հանցագործը Բուշն է եւ ԱՄՆ նախագահին անվանել «ստոր»:

Սադդամ Հուսեյնը մեղադրական որոշումը չի ստորագրել: Այդ ընթացքում արգելվել է նրան պատշաճանելու պատրաստ 20 փաստաբանի եւ 500 վկաների մուտքն Իրաք: Հարցը, սակայն, Սադդամին հասցեագրված մեղադրանքներ չեն, այլ նոթատետրերում գրի առած մի քանի նախադասություն է, որոնք

Մշակութային տարեգրության արշանագիրը

Կյանքի խորքերը շրջանցելու, չնկատելու ցանկությունից չէ, երբ աչքը գեղեցիկն է ոռնում, երբեմն անգամ ակամա, այլ աշխարհն ուրիշ գույնի ու ձեւի մեջ ներկայացնելու ունակությունն է, որ հնարավորություն է տալիս ճանաչելու եւ ճանաչելի դարձնելու դրանք ուրիշներին: Լեւոն Լաճիկյան առվեստաբան լրագրողն ունի գեղեցիկը տեսնելու այդ կարողությունը, որն էլ անխուսափելիորեն նրա մեջ սեր է ծնել արվեստի նկատմամբ: Մարդկային հոգու լույսը մթագնող ցավին ու զրկանքին շատերն են զոհ գնում, տրվում կյանքակուլ օրենքներին՝ երազները թողնելով առօրյայի մացառուտներին: Երբ 1992-94 թթ. մղձավանջային խավարը տիրել էր հայ մարդու կյանքը, եւ շատերը իբրեւ ելքի ճանապարհ ընտրեցին երկրից հեռանալը, իսկ մնացածը մի կերպ իր գոյության պահպանման բնազդին էր տրված, եղան այնպիսիք, որոնք այդ անլույս օրերին գույն, ոգի ու լույս հաղորդեցին: Խոստովանենք, որ նման կարելիությամբ օժտված է միայն ճշմարիտ արվեստը, որքան էլ այսօր մեր կյանքից հանիրավի դուրս էին մղված հոգեւոր-բարոյական արժեքներ կրող արվեստագետն ու նրա ստեղծածը: Արտահայտությամբ այդ տարիների հիշողությունը ճղճիմ կենցաղ ու մռայլ առօրյա է միայն արձանագրում, ավելին՝ երբ չկար ջերմություն տներում, երբ պակասել էր սեղանին հացը, մարդիկ դարձել էին մռայլ, ինքնամփոփ ու եսակենտրոն:

Սակայն պարզվում է, որ մայրաքաղաքն այդ տարիներին նաեւ լուսավոր բռնկումներ է ունեցել, եւ ահա Լեւոն Լաճիկյանը նրանցից է եղել, որ որսացել է այդ կարճ պահերը եւ վավերացրել օրերի մշակույթի պատմությունը «Անլույս օրերի ոգեղեն դողանջները» ժողովածուում: Այդ տարիների մշակութային անդադարձների կաթիլ առ կաթիլ արձանագրումը նա կատարել է «Ազգ» օրաթերթում աշխատելիս, այսօր դրանք վերածվել են մշակութային իրողությունների մնայուն տարեգրության:

Օրաթերթային լրագրությանը բնորոշ հրանցիկ-տեղեկատվական բնույթը, պարզ սղագրում-արձանագրումը բացակայում են նրա հոդվածներում: Հակառակը՝ գեղագետ արվեստասերի նրբաթափանց տեսողությամբ լրագրային արվեստաբանության այս նորահայտ էջերը մշակութային իրողությունների վերլուծություն-մեկնաբանություններ են՝ անհատականության դրոշմով, կատարված դիտողունակ եւ զգայուն հայացքի ներքո:

Այդ տարիներին, երբ լույս չէին տեսնում արվեստաբանական շատ հանդեսներ, դադարեցրել էր իր գործունեությունը «Գրական թերթը», «Ազգ» օրաթերթը սանձնեց մշակութային կյանքի խոսափողը դառնալու պարտավորությունը, եւ թերթի աշխատակից Լեւոն Լաճիկյանը

ոչ սահից սահ էին վազում, արվեստանոցից արվեստանոց: Այդպես խնամով ու ջանադրաբար հավաքվել ու մշակվել է նյութը, առօրեական լրագրությանը հաղորդելով գեղագիտական նրբաճաշակություն, լեզվական մարտություն, արվեստը գնահատողի, ճանաչողի ու ընդդատի որոշակի վերաբերմունք, նաեւ մատուցման կոլտուրա:

«Առանց չափազանցության, բարեբախտություն էր մշակույթի գործիչներիս եւ ընդհանուր վերցրած մեր մշակութային կյանքի համար, որ հազվագյուտ ազգանունով եւ նույնքան նուրբ ճաշակով այդ երիտասարդ գեղագետը ձեռն առավ մշակութային մեկնաբանի գրիչը եւ գիտական գործունեության զուգահեռ սանձնեց մշակութային ժամանակագրի բարդ ու պատասխանատու դերը», ժողովածուի առաջաբանում գրում է Տիգրան Լեւոնյանը:

«Անլույս օրերի ոգեղեն դողանջները» ժողովածուի «Մշակութային անդադարձներ» եւ «Դիմանկարային էսքիզներ» բաժիններում ամփոփված հեղինակի հիմնականում 1992-95 թթ. հոդվածները պատմում են գրականության, նկարչության, երաժշտության, քանդակագործության, կինոյի եւ թատրոնի ոլորտներում տեղի ունեցող նշանակալի (նաեւ ձախողված) երեւույթների եւ անունների մասին, անդադարձներ արվել են նաեւ երիտասարդ սկսնակ արվեստագետների գործերին՝ արվեստաբանի շիտակ հայացքով, առանց հետեւելու խաղի ընդունված կանոններին... Իր հոդվածների հերոսներն արվեստի ամենատարբեր ոլորտի մարդիկ են՝ Գրիգոր Խանջյան, Վարդուհի Վարդերեսյան, Տիգրան Լեւոնյան, Վիլեն Գալստյան, Պերճ Ժամկոչյան, Ալեքսանդր Գրիգորյան, Հարություն Վրդ. Պզտիկյան, Էդմոն Քեռսոյան, Հենրիկ Սիրավյան, Բարսեղ Թումանյան եւ շատ-շատերը:

Ժողովածուի ոգուն բնորոշ պարզ ու անկեղծ մթնոլորտում օրեր առաջ նորընծա գրքի շնորհանդեսը կատարվեց ԱՕԿՍ-ի դահլիճում: Այնտեղ իր արվեստագետ բարեկամներն էին, հեղինակի ընկերները: Գրքի խմբագիր-գրականագետ Գուրգեն Գասպարյանը ժողովածուն արժեւորեց որպես ոգեղեն ժամանակների ոգեղեն արտահայտություն՝ ընդգծելով հեղինակի բանիմաց եւ մասնագիտական վերլուծական կարողությունը, գործնական եւ տեսական գիտելիքների փորձը, որով եւ ակադեմիական գրագիտության սկզբունքներ բերեց լրագրություն: Վլադիլեն Բալյանը՝ հեղինակի երաժիշտ բարեկամը, հեղինակի կատարածը համեմատեց մեղվի աշխատանքի հետ՝ իբրեւ անցյալ օրերի մշակութային մնայուն տարեգրություն:

«Առաջից հետո արվեստագետին եմ համարում արարող: Եվ մշտապես փորձել եմ հասկանալ այդ սրբազան պրոցեսը»: Դա հասկանալու համար իրեն օգնել են ոչ միայն արվեստաբանական գիտելիքները, գործնական ջիղումները, այլ նաեւ արվեստի հանդեպ ունեցած սերը: Լեւոն Լաճիկյանը հիշեց, թե այդ օրերին ինչպես ոգով Դավիթաշենից «Ազգի» խմբագրություն էր գալիս, մի բան, որ այսօր տարակուսելի է թվում: Հեղինակը խոստովանեց, որ եթե չլիներ «Ազգ» թերթը, ինքը թերեւ չէր գրի:

«Երբեմն մարդիկ հարցնում են՝ ինչով ես զբաղվում, ասում եմ՝ թիթեռնիկ եմ թոցնում՝ 24-ժամյա կյանք ունեցող մի թերթ, առա հաջորդ օրվա թիթեռնիկի մասին եմ մտածում: Հաճախ ես մտածում, թե օրաթերթի խմբագրի գործն իմաստավորվո՞ւմ է արդյոք: Այնուամենայնիվ, այժմ տեսնում եմ, որ այդ ցավագին, դժվար օրերի աշխատանքը կուտակվել, դարձել է հիշատակարան, տարեգրություն, այդ ժամանակաշրջանի համար հում նյութ: Մեր թերթում այդ տարիներին Լեւոն Լաճիկյանը նախանձախնդրորեն հետեւում էր մշակութային իրադարձություններին եւ ահա դրանք արձանագրվել ու պատմություն են դարձել, որն էլ մխիթարում է նրանց, որոնց թվում է, թե անիմաստ գործ են անում», ասաց «Ազգի» խմբագիր Հակոբ Ավետիքյանը:

«Անլույս օրերի ոգեղեն դողանջներ» ժողովածուն (399 էջ) գրականության եւ արվեստի թանգարանի հրատարակությամբ լույս է տեսել Հայ օգնության ֆոնդի հովանավորությամբ (սեւ, սպիտակ եւ գունավոր լուսանկարներով, բարձրորակ տպագրությամբ, «Տիգրան Մեծ» տպարանում), նաեւ հեղինակի արվեստագետ ընկերների աջակցությամբ: Գիրքը նվիրված է հեղինակի ծննդավայր Կումայրիին:

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հաջորդ անգամ՝ առանց հրավերի

Գրողների համահայկական երկրորդ համաժողովի ընթացքում ֆրանսահայ գրող Ռուբեն Մելիքն արժանացավ մշակույթի զարգացման բարեգործական հիմնադրամի ոսկե մեդալին հայ գրականության զարգացման ու տարածման ասպարեզում ունեցած զգալի ավանդի համար:

Ելույթ ունենալիս 83-ամյա պատկառազդու պոետն ասաց.

- Թեպետ բանաստեղծություններս գրվել են ֆրանսերեն, սակայն ինձ ներշնչողը եւ ոգեւորողը եղել է իմ հայրենիքը: Թերեւս սա է պատճառը, որ ընդդատները գում էին, թե իմ ստեղծագործությունն ընթերցելիս զգացվում է հայկական շունչը:

Ռուբեն Մելիքը Հայաստան առաջին անգամ այցելել է 1970-ական թթ., սակայն անկախ Հայաստանում գտնվում է առաջին անգամ: Ժամանակին 5 հազար մարդուց բաղկացած լսարանի առջեւ հանդես եկող եւ իր հոեստորական ունակություններով բոլորին հմայած Ռուբեն Մելիքն այժմ կոկորդի վիրահատության պատճառով դժվար է խոսում: Այդ իսկ պատճառով Հայաստանի մասին իր տպավորությունն արտահայտեց ընդամենը երկու բառով. «Լավ է, առաջընթաց կա»:

Ռուբեն Մելիքը ծնվել է 1921 թ. Փարիզում: 20 գրքերի հեղինակ է, որոնցից շատերը թարգմանվել են հայերեն: Իր բանաստեղծություններում բացահայտել է մարդկային ապրումները, հույզերն ու թրթիռները, եւ այս ամենի կողքին գրել պատերազմը ընդդատող բազմաթիվ ստեղծագործություններ: «Թող պատերազմը չներվի», ասել է Ռուբեն Մելիքը, քանի որ ինքն էլ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եղել է դիմադրական շարժման ակտիվ մասնակից:

Իսկ «Քարե պահակ» եւ «Լեգենդ Հայաստանի մասին» ստեղծագործությունները նվիրված են պատմական հայրենիքին:

Դեռ մեկ շաբաթ բանաստեղծը լինելու է իր հայրենիքում: Այժմ նա մեկնել է Արցախ: Համաժողովի ավարտից հետո կվերադառնա Ֆրանսիա, սակայն խոստացել է, որ Հայաստան կայցելի նաեւ իր սեփական նախաձեռնությամբ՝ առանց հրավերի սպասելու:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Թ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

«Քանի՞ ուրիշ Շիրազ կա»

Այս տարվա ապրիլին լրացավ Հովհաննես Շիրազի ծննդյան 90-ամյակը: Կառավարական հոբելյանական հանձնաժողովը հանդիսություններ նախատեսել է սեպտեմբեր ամսին: Թե ինչո՞ւ է ապրիլը սեպտեմբերով փոխվում, դա փորձենք բացատրել կամ նրա (հանձնաժողովի) զբաղվածությամբ կամ էլ, անհարմար չլինի ասելը, միջոցներ չունենալով: Ասվածն նրանց տա այդ երկուսն էլ: Իսկ մեզ թվում էր, թե Շիրազն այն բանաստեղծն է, որ գոնե նրա ծննդյան օրը, դրանից ամիսներ առաջ ու ամիսներ հետո օդը պիտի հագեցած լինի շիրազյան թրթիռով, նրա պոեզիային նորից ու նորից հաղորդվելու հաճության խորը ապրումներով, նրա ներից եկող ճառագումների վայելքով:



Այդ պակասը, փառք Աստծո, հրաշալիորեն լրացվել ու լրացվում է Շիրազի պոեզիայի երկրպագուների ազնիվ ու խորին ակնածանք պարունակող վերաբերմունքով: Դա հատկապես նկատելի է «Շիրազին իրենցը համարող» գյուղերցիների վերաբերմունքի մեջ:

- Ինքը մենակ մեզ մոտ էր ուրտում կուսակված դառնությունը թափում,-ասում է Շիրազին «իրենով արած» գյուղերցի Վարդան Ղուկասյանը,- Գյուղին՝ Շիրազի մանկության քաղաքը, նրա համար նաեւ անկեղծանալու քաղաք էր՝ «Սիրտս բացեմ ձեր առաջ»,-ասում էր ու ընդդատներից բողոքում՝ «Տարիներով պոեմներս չէին տպագրվում՝ չորս աչքով էին նայում իմ գրվածքներին: Վայ ընդդատներով լեցուն է եղել շուրջս, եւ ես հազիվ էի էպոս դիմադրում ու դիմանում»:

- Այս նույն Գյուղրիում,-շարունակում է պատմել Վարդան Ղուկասյանը,- Շիրազը ոչ չարությամբ, ոչ զարմանքով, այլ պարզապես իր գրչի զորությանը ապավինած մարդու պարզությամբ եւ իրեն ընդդատողներին բանի տեղ չդնողի վստահությամբ ասում էր. «Ինչքան հարվածեցին, գրիչս էնքան կատաղեց»:

Վարդան Ղուկասյանի վերաբերմունքը իր քաղաքի մեծամեծներով հպարտություն ապրողի վերաբերմունք է: Տարիներ առաջ, երբ Գյուղրիի զբոսայգում տեղադրվեց Իսահակյանի կիսանդրին, Վարդանն ինքն իր մեջ, ինքն իր համար խորհեց, թե ծիծաղելի, որ մեկ մեծի հարեւանությամբ մյուս մեծն էլ հանգրվանի, եւ անձնական գումարներով պատվիրեց ու տեղադրեց Շիրազի՝ ծիծաղելի նույնանման կիսանդրին: Հիմա զբոսայգու ճեմուղու մի կողմի պուրակից Իսահակյանը, մյուսից Շիրազը՝ դեմ-հանդիման, դիմավորում եւ ուղեկցում են մարդկանց, եւ անցորդների մոտ ինքնին առաջանում է մտովի Իսահակյան ու Շիրազ արտասանելու ցանկությունը: Մեծարման, հարգանքի տուրքի, հիշատակի խնկարկումի ինչ գեղեցիկ միջոց: Ոչ մի տեղ չնշվեց, չգրվեց կիսանդրին պատվիրողի, տեղադրողի անունը՝ Վարդանը դրա կարիքը չուներ. «Շիրազի համար ինչ էլ որ անենք, ոչինչ է»:

Հետո նրա հայացքը Շիրազի տուն-թանգարանին դարձավ: Երկրաշարժից տուժած 10 ընտանիք էր ծվարել Շիրազի հարկի տակ: Տաս ընտանիք բնակարանով ապահովելը մեկ անձի խնդիր չէր, ու երեւի, Աստծո օրհնությունն էր, որ Վարդան Ղուկասյանը քաղաքապետ ընտրվեց, եւ դյուրացավ տուն-թանգարանն ազատելու, նորոգելու, վերաբացելու խնդրի լուծումը: Հիմա գործում է տուն-թանգարանը, նույն ջանադիր վերաբերմունքով ասիճանաբար լրացվում են ցուցանմուշները: Շուտով թանգարանը կունենա նաեւ մի տեսաֆիլմ, որն ընդգրկում է պոետի՝ առաջին անգամ ներկայացվող ելույթներն ու հազվագյուտ կադրերը, որի ստեղծման գործում Ղուկասյանի կատարած ներդումներին իր որոշակի մասն է բերում նաեւ Շիրազի նկատմամբ խորին մեծարանք ունեցող մեկ այլ գյուղերցի՝ Արմեն Դարբինյանը: Հավելենք, որ մշակույթի նախարարությունն էլ պատվիրել է վերը նշված նյութերով 2005 թվականի սեղանի օրացույց պատրաստել: Նմանօրինակ վերաբերմունքով են Շիրազին ճշմարիտ սիրող մարդիկ տեր դառնում իրենց խոսքին՝ «Քանի՞ ուրիշ Շիրազ կա»: Այսպես, Շիրազի ժառանգությամբ իրապես հետաքրքրվողների համար վերաբացված տուն-թանգարանն այլեւս դառնում է շիրազյան մասունքներին հաղորդակցվելու հաճելի մի վայր: Եվ տարօրինակ մի զուգահեռում դարձյալ կապվեց Իսահակյանի հետ՝ Շիրազի տնից միչ այն կողմ Իսահակյանի՝ երկրաշարժից տուժած տուն-թանգարանն էր, որի վերանորոգչական աշխատանքները կատարվեցին դարձյալ Վարդան Ղուկասյանի նախաձեռնությամբ ու գործուն միջամտությամբ:

- Հիմա մենք մի միչ խաղաղված կարող ենք ասել, որ երկու մեծերի հանդեպ մեր ունեցած պարտքը կատարեցինք,- ասում է Ղուկասյանը, ասում է գյուղերցու այն հպարտությամբ, որը երեւի թե նշանակում է՝ «Էլա գնա ուրիշ տեղ մեկ քաղաքում այդպիսի երկու հանճարեղ մարդ գտիր»: Այն ինչ արվում է Շիրազի համար, քաղաքապետը պարտականություն չի համարում՝ «Սա ավելի շուտ ստի գործ էր, յուրաքանչյուր հայի պարտքն է գնահատել իր մեծերին»: Ասում է եւ հպարտությամբ հավելում. «Փառք Աստծո, Հովհաննես Շիրազը մի տեսակ վերաբնակության վերադարձավ իր հայրենի քաղաք»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊՈՅԱՆ

Արաբները մեր մասին

Կիսամեռ հայոտի, որի կողքին մահվան ծիրանների դեմ պայքարող որբ երեխա է: Այս երկու դժբախտների երկխոսությունն է ներկայացնում արաբ դասական բանաստեղծ Մահարուֆ էլ Ռասաֆին իր «Որբին մայրը» պոեմում: Այն գրվել է Մեծ եղեռնից 6 տարի առաջ՝ 1909 թ. եւ հայկական ջարդերին նվիրված առաջին գեղարվեստական արտահայտությունն է արաբական գրականության մեջ: Իսկ արաբական մամուլը կոտորածներին անդրադառնում է դեռեւս 1896-98 թթ.: Դեռ ավելին՝ 1913 թ. Փարիզում տեղի է ունենում արաբ մտավորականների կոնգրեսը, որտեղ առանձին զեկույցներ են հնչում հայ ժողովրդին վերաբերող:

Լիբանանահայ բանաստեղծ, թարգմանիչ Սարգիս Կիրակոսյանը շուրջ 20 տարի ուսումնասիրում է արաբ գրականությունը: «Դեր Զոր, Ռակկայի եւ Քամիշլիի շրջաններում ծնված ու մեծացած արաբ արձակագիրների աչքի առջեւ է տեղի ունեցել հայոց կոտորածը: Նրանք այդ ամենն արտացոլել են իրենց ստեղծագործությունում եւ իբրեւ պատմական հիշողություն փոխանցել սերունդներին», ասում է Սարգիս Կիրակոսյանը:

Հայոց եղեռնին են անդրադառնում նաեւ նոր սերնդի գրողները: Ֆայալ ալ Խուտրոի «Գիշերվան կամ հասմիկի թերթեր» վեպի առանցքային հերոսներից է եղեռնից մազապուրծ զեյթունցի մի երիտասարդ: Նա հաստատվում է Հալեպում եւ տուն կառուցում իր հայրենի տան նմանությամբ, ամենաբարձր բլրի վրա:

Ա. Բ.

Մարզական

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Հաղթողը կորոտվի չորս պարտիայում

Տրիպոլիում անցկացվող շախմատի աշխարհի տղամարդկանց առաջնությունը թեւակոխել է վճռորոշ փուլ: Ասպարեզում մնացել են չորս ուժեղագույնները: Կիսաեզրափակիչում մրցակիցները միմյանց հետ չորս պարտիա են անցկացնելու դասական շախմատի կանոններով, որից հետո հարկ եղած դեպքում կանցկացվեն լրացուցիչ մրցախաղեր արագ շախմատից եւ կայծակնային խաղից:

Մրցակիցներն արդեն անցկացրել են առաջին պարտիան: Թոփալովի ու Կասիմջանովի մրցախաղում գրանցվել է ոչ-ոքի, իսկ Մայել Ադամսը, որ նախորդ փուլում պայքարից դուրս էր մղել Վլադիմիր Հակոբյանին, սեւերով պարտության մատնեց Թեյմուր Ռաջաբովին:

Հուլներն անկասելի են

Հունաստանի հավաքականի ֆուտբոլիստները շարունակում են իրենց հաղթարշավը ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունում՝ անակնկալ հաղթանակներով զարմացնելով բոլորին: Հունաստանի հավաքականն, անշուշտ, այս առաջնության հայտնությունն է եւ, անկախ պորտուգալացիների հետ եզրափակիչ խաղի արդյունքներից, արժանի է դրվատանքի: Եվրոպայի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ մրցաշարի բացման եւ փակման հանդիպումներում միմյանց հետ կմրցեն միեւնույն հավաքականները: Այո, հենց պորտուգալացիների հետ առաջնության բացման խաղում հույները սկիզբ դրեցին իրենց հաղթարշավին ու անակնկալներին: Վստահ խաղի շնորհիվ հույները մտան քառորդ եզրափակիչ, որտեղ պայքարից դուրս մղեցին Եվրոպայի ներկայիս չեմպիոն Ֆրանսիացիներին: Եվ ահա, կիսաեզրափակիչում Հունաստանի հավաքականի առջեւ իր զենքերը վայր դրեց նաեւ հզոր Չեխիայի ընտրանին, որին մասնագետները համարում էին չեմպիոնի կոչման գլխավոր հավակնորդը: Իհարկե, չեխերի համար մեծ կորուստ էր Պավել Նեդվեդի բացակայությունը, որը 40-րդ րոպեին վնասվածքի հետեւանքով ստիպված էր թողնել խաղադաշտը: Որոշ չափով մարզական բախտն էլ այդ օրը կարծես երես էր թեքել չեխերից, որոնց երկու հարվածներն իր վրա ընդունեց դարպասի ձողը: Հույները հմտորեն էին պաշտպանվում եւ դիմում վսանգավոր հակագրոհների: Եվ ահա, լրացուցիչ ժամանակում, երբ գործում էր «արծաթե գոլի» կանոնը, հույները խփեցին հաղթական գնդակը: Հուլիսի 4-ին Լիսաբոնում նրանք պորտուգալացիների հետ կվիճարկեն չեմպիոնի տիտղոսը: Երկու թիմերն էլ առաջին անգամ են մտնում եզրափակիչ, ուստի Եվրոպան շուտով նոր չեմպիոն կունենա:

Հանդիպման մասին մարզիչները հետեւյալ կարծիքն էին.

Կարել Բրյուկներ (Չեխիա)- Շատ եմ ցավում, որ հանդիպման ելքը վճռեց պատահական գոլը: Վերջին 3 տարում մենք 30 խաղ ենք անցկացրել եւ առաջին անգամ անկյունայինից գոլ բաց թողեցինք: Ես պետք է շնորհավորեմ հույներին տակտիկապես գրագետ գործելու համար եւ հույս ունեմ, որ դա կօգնի նրանց եզրափակիչում: Մենք վաղ չխաղացինք 2-րդ խաղակեսում,

նի հաղթանակ տոնեցինք: Լրացուցիչ ժամանակում զգալիորեն ուժեղացրինք հարձակողական գործողությունները եւ հաղթանակ կորզեցինք: Մենք երեք տարի համառորեն աշխատում էինք եւ հասանք արդյունքի: Այժմ թիմն իր ուժերի նկատմամբ հավատով է լցված:

Խաղի արձանագրությունից
Հունաստան-Չեխիա՝ 1-0 (0-0)
Դելաս (105):

Կանը ցանկանում է հեռանալ «Բավարիայից»

Մյունխենի «Բավարիայի» վերջին տասնամյակի խորհրդանիշ Օլիվեր Կանը ցանկանում է հեռանալ թիմից եւ հանդես գալ այնպիսի հզոր ակումբում, որի կազմում եւս մեկ անգամ վայելի չեմպիոնների գավաթի նվաճման բերկրանքը: Այս մասին նա արդեն տեղյակ է պահել ակումբի ղեկավարությանը: Սակայն վերջինս չի ցանկանում բաժանվել իր փորձառու դարպասապահից, որը «Բավարիայի» հետ մինչեւ 2006 թ. պայմանագիր ունի կնքած: Ըստ նախնական պայմանավորվածության, Կանը «Բավարիայում» ելույթներն ավարտելուց հետո պետք է ակումբում զբաղեցներ գլխավոր մենեջերի պաշտոնը:

34-ամյա Կանը «Բավարիայում» հանդես է գալիս 1994 թ.: Այդ ընթացքում նա թիմի կազմում անցկացրել է 308 խաղ եւ արժանացել 15 տարբեր տիտղոսների: Ընթացիկ առաջնությունը Կանի համար անհաջող էր: Վճռորոշ հանդիպումներում նա կոպիտ սխալներ թույլ տվեց, որի հետեւանքով թիմն անհաջողության մատնվեց: Հիշենք չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի «Ռեալի» հետ խաղում նրա բաց թողած գոլը: Կանի անվստահ խաղի պատճառով «Բավարիան» զրկվեց չեմպիոնությունից: Վերջերս էլ նա անհաջող պաշտպանեց ազգային հավաքականի դարպասը: Ռումինիայի ընտրանու հետ ընկերական խաղում արդեն առաջին 45 րոպեներին Կանը չորս գնդակ բաց թողեց եւ ընդմիջմանը Ուտի Ֆյոլլերը փոխարինեց նրան: Եվ թեեւ այս ամենին, «Բավարիայի» նոր գլխավոր մարզիչ Ֆելիքս Մագաթը մեծ հույսեր է կապում դարպասապահի հետ:

Բացառված չէ, որ Կանը տեղափոխվի «Մանչեսթր յունայթեդ», քանի որ Ֆերգյուսոնը դժգոհ է թիմի դարպասապահ Թիմ Հոլադից:

«Վալենսիան» փոխհատուցում է պահանջում

Իսպանական «Վալենսիան» դատի է տվել իր նախկին գլխավոր մարզիչ Ռաֆայել Բենիտեսին, որը հեռացել է թիմից եւ ստանձնել անգլիական «Լիվերպուլի» ղեկը: Բենիտեսի պայմանագրի ժամկետը «Վալենսիայի» հետ դեռեւս չէր ավարտվել, սակայն նա ժամկետից շուտ խզել էր այն եւ նոր պայմանագիր կնքել «Լիվերպուլի» հետ: «Վալենսիայի» ղեկավարությունը դրա համար Բենիտեսից 3,6 մլն դոլարի փոխհատուցում է պահանջել: Իսպանական ակումբի նախագահ Խայմե Օրտին հայտարարել է, որ յուրաքանչյուրը պետք է պատասխանի իր շահերը: Բենիտեսը չի կատարել ակումբի հանդեպ ստանձնած պարտավորությունները, ուստի «Վալենսիան» նրանից փոխհատուցում է պահանջում:

Իր հերթին Բենիտեսը հայտարարել է, որ ակումբն իրեն 2,92 մլն դոլար է պարտք, ինչը նրան չվճարված աշխատավարձն ու պարգեւավճարներն են կազմում: Բենիտեսը «Վալենսիայից» հեռացել է հուլիսի 1-ից: Որոշ ժամանակ անց նա 5-ամյա պայմանագիր էր կնքել «Լիվերպուլի» հետ: Իսկ «Վալենսիայի» հետ պայմանագրի ժամկետը լրանում էր մեկ տարի անց:

Տորեսը գրավել է «Միլանի» ուշադրությունը

Իտալական «Միլան» ակումբի ղեկավարության ուշադրության կենտրոնում է հայտնվել Իսպանիայի հավաքականի հարձակվող Ֆեռնանդո Տորեսը: Եվրո-2004-ում ցուցադրած նրա խաղը շատ ակումբների է դուր եկել, որոնք ցանկանում են իրենց կազմում ընդգրկել շնորհալի ֆուտբոլիստին: Սակայն «Միլանն» այդ ակումբների նկատմամբ առավելություն ունի: Տորեսի թիմը՝ Մադրիդի «Ատլետիկոն» իտալական ակումբին 24 մլն եվրոյի պարտք ունի: «Միլանը» պատրաստ է չեղյալ համարել այդ պարտքը, եւ 16 մլն եվրո ավելացնել Ֆեռնանդո Տորեսին գնելու համար:

Հրաժեշտ հոլանդական ձեւով

Հոլանդիայի հավաքականի վեց ֆուտբոլիստներ որոշել են հրաժեշտ տալ ազգային ընտրանուն: Այլեւս ազգային հավաքականի մարզաշապիկը չեն հագնի հավաքականի ավագ Ֆրանկ դե Բուրը, Պիեռ վան Հոյդոնկը, Մարկ Օվերմարսը, Պաուլ Բոսվելտը, Յաոպ Ստամն ու Էդվին վան դեր Սարը:

Եթե հավաքականի վետերաններ Ֆրանկ դե Բուրի եւ վան Հոյդոնկի հրաժարականները մարզասերների կողմից նորմալ են ընդունվել, ապա զարմանք է առաջացնում Յաոպ Ստամի եւ դարպասապահ վան դեր Սարի վճիռը: Ստամն իր որոշումը բացատրել է նրանով, որ ցանկանում է ավելի շատ ուշադրություն դարձնել ընտանիքին: Իսկ ահա, վան դեր Սարի հրաժարականի պատճառը Հոլանդիայի հավաքականի անհաջողությունն էր Եվրո-2004-ում: Թեեւ Հոլանդիայում մարզասերները հոգով են, որ երկրի լավագույն դարպասապահը կվերադարձնայի իր վճիռը եւ կրկին կդառնայի հավաքականի դարպասը: Ամեն դեպքում հայ մարզասերները նշված ֆուտբոլիստներից ոմանց չեն տեսնի երեւանում, երբ Հոլանդիայի հավաքականն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում կհանդիպի Հայաստանի ընտրանու հետ:

Մարկովն էլ հրաժարական տվեց

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մասնակից հավաքականների մարզիչներից Պլամեն Մարկովն էլ հեռացավ իր պաշտոնից: Եվ թեեւ Բուլղարիայի ֆուտբոլի ֆեդերացիան նրան առաջարկել էր եւս երկու տարով երկարաձգել պայմանագիրը, վերջինս հրաժարվել էր: Նա հաջողություն էր մաղթել հավաքականին, նշելով, որ թիմը լավ ապագա ունի, որում տաղանդավոր երիտասարդներ են խաղում: Իսկ ահա Գերմանիայի ընտրանին առայժմ մնացել է առանց մարզչի: Այն գլխավորելու առաջարկը մերժել է «Բավարիայի» նախկին մարզիչ Օսմար Հիցֆելդը, նշելով, որ դա մեծ պատիվ է իր համար, սակայն ինքն առայժմ պատրաստ չէ իր ուսերին նման մեծ պատասխանատվություն վերցնել:

Շարապովան անակնկալ է մատուցում

Թենիսի ուիմբլդոնյան մրցաշարում հայտնի դարձան կանանց եզրափակիչի մասնակիցները: Իսկական անակնկալ մատուցեց 17-ամյա Մարիա Շարապովան: Նրանից ընդամենը 1 ժամ 52 րոպե պահանջվեց փորձառու Լինդսեյ Դեւենպորտի նկատմամբ հաղթանակ տոնելու համար:

Ամերիկացի թենիսիստուհին միայն «Մեծ սաղավարտի» մրցաշարերում անցկացրած 202 հանդիպումներից 161-ն ավարտել էր իր օգտին: Հետաքրքրական է, որ մինչ օրս ուիմբլդոնյան մրցաշարի անցկացման ողջ պատմության ընթացքում 13-րդ համարը կրող թենիսիստուհուն երբեք չէր հաջողվել ոչ միայն եզրափակիչ, այլ նույնիսկ կիսաեզրափակիչ մտնել: Եվ ահա, Մարիա Շարապովային 13 թիվը հաջողություն բերեց: Առաջին խաղափուլում զիջելով մրցակցուհուն (2-6), Շարապովան մյուս 2 խաղափուլերում հաղթեց (7-6, 6-1): Եզրափակիչում Շարապովայի մրցակցուհին կլինի Սերենա Ուիլյամսը, որը պարտության էր մատնել Ֆրանսուհի Ամելի Մորեսմոյին (6-7, 7-5, 6-4): Հետաքրքրական է, որ թենիսիստուհիներից զվեյցարուհի Մարտինա Հինգիսին է հաջողվել ամենաերիտասարդ տարիքում (16 տարեկան 9 ամսական) հանդես գալ Ուիմբլդոնի եզրափակիչում:

Ամենաբարձրն Էրիկսոնի աշխատավարձն է

Հետաքրքրաշարժ տվյալներ են հրապարակվել Եվրոպայի առաջնության մասնակից հավաքականների գլխավոր մարզիչների վարձատրության վերաբերյալ: Պարզվում է, որ 16 հավաքականների մարզիչներից ամենաբարձր վարձատրվողն Անգլիայի հավաքականի մարզիչ Սվեն-Գորան Էրիկսոնն է: Նրա տարեկան աշխատավարձը 6 մլն եվրո է: Երկրորդ տեղում Գերմանիայի հավաքականի նախկին մարզիչ Ռուդի Ֆյոլլերն է՝ 2,4 մլն եվրո: Պորտուգալացիների մարզիչ Լուիս Ֆելիպե Սկոլարիի աշխատավարձը կազմում է 1,6 մլն եվրո: Հաջորդ տեղերում են Զովանի Տրապատոնին (Իտալիա)՝ 1,6 մլն եվրո, Ինյակի Սաեսը (Իսպանիա)՝ 971 հազար, Ժակ Սանտինին (Ֆրանսիա)՝ 523 հազար, Օսմն Ոեհագելը (Հունաստան)՝ 149 հազար, Կարել Բրյուկները՝ 105 հազար եվրո:

Նոր մարզիչն Արագոնեսն է

Իսպանիայի հավաքականի ղեկը ստանձնեց Լուիս Արագոնեսը: Նա մարզում է նաեւ իսպանական «Մայորկան»: Արագոնեսն Իսպանիայի հավաքականը կնախապատրաստի 2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությանը: Արագոնեսը խոստացել է, որ իսպանացիները հաջող մրցելույթներ կունենան եւ կնվաճեն աշխարհի առաջնության ուղեգիր:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

տեղեկագրքով, Ինտերնետով, CD-ով, հեռախոսով

ՍՓՅՈՒՌ տեղեկատվական ծառայություն

Երեւան, Փավստոս Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 590000 www.spyur.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նոր Հաճընի քաղաքապետարանը հայտարարում է հողատարածքների վարձակալության մրցույթ՝ բացօթյա հանգստի գոտիներ կառուցելու համար:

Հողատարածքի գտնվելու վայրը	Հողատարածքի ընդհանուր մակերեսը	Վարձակալության ժամկետը	Վարձավճարի տարեկան մեկնարկային գինը
Ք. Նոր Հաճընի Ազոց Հարությունյան փողոցում	1320 քմ	50 տարի	39.000 դր.
Ք. Նոր Հաճընի պոլիկլինիկայի շենքի դիմաց	405 քմ	50 տարի	12.000 դր.
Ք. Նոր Հաճընի Արգնի ձորի ափին, հուշարձանի հեռնամասում	1116 քմ	50 տարի	33.000 դր.
Ք. Նոր Հաճընի Տոռոզյան եւ Գայի փողոցների հատման անկյունում	1486 քմ	50 տարի	43.700 դր.
Ք. Նոր Հաճընի Տոռոզյան փողոցի թիվ 15 շենքի հեռնամասում	210 քմ	50 տարի	6200 դր.

Մրցույթը կանցկացվի 2004 թ. օգոստոսի 6-ին, ժամը 11:00-ին, Նոր Հաճընի քաղաքապետարանի շենքում (հասցեն՝ Տոռոզյան փ. 7):

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ 2004 թ. օգոստոսի 3-ը, ժամը 18:00-ը, մրցութային հանձնաժողովին պետք է ներկայացնեն.

ա) մրցույթին մասնակցության հայտը,
բ) տարածքի նպատակային օգտագործման բիզնես-ծրագիրը,
գ) մրցույթին մասնակցության վճարի անդորրագիրը:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել մրցութային հանձնաժողովին:
Հեռախոսներ՝ (0-24) 4-27-70, 4-27-85

Մրցութային հանձնաժողով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայկոոպը հրավիրում է աճուրդի
Այն տեղի է ունենալու 2004 թ. հուլիսի 20-ին Հայկոոպի շենքում
Հասցեն՝ Ք. Երեւան, Խանջյան 13
Վաճառվում է

Հհ. Վաճառվող գույքի անվանում	Հասցեն գտնվելու վայրը	Վաճառքի մեկնարկ. գինը (հազ. դրամ)	Աճուրդի մասնակց. վճարի չափը (հ. դ.)
1. Գորիսի ՔՍԿ-ի Աբեւտրի կենտրոն	Ք. Գորիս Ավանգարդի 11	30989,2	155,0

Աճուրդը կայանալու է դասական եղանակով: Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 2004 թ. հուլիսի 19-ը, ժամը 16:00 աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝ աճուրդին մասնակցության հայտը, աճուրդին մասնակցության վճարի անդորրագիրը: Մուտքագրման հաշիվն է՝ 23802607570100, «Առէկսիմբանկ»:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին:
Հեռախոս՝ 54-15-01:

ARMENIAN EUROPEAN POLICY AND LEGAL ADVICE CENTRE
AEPLAC

28 Charents Str., Yerevan 25, Armenia
Tel/Fax: 374 (1) 550 081, 578 595, 559 200

Announcement

AEPLAC, the Armenian-Europena Policy and Legal Advice Centre is seeking Volunteers to assist in the preparation of a Draft National Programme for Implementation of the Partnership and Co-operation Agreement (PCA) between the EU and Armenia, and serve as liaison persons between AEPLAC and various Ministerial working groups.

Eligibility:
Graduates of Higher Education Establishments and students of graduate years,
specialised in economics, law and the English language;
Excellent knowledge of English (oral and written);
Excellent knowledge of MS Office applications, and in the use of Internet;
Ability to work both as a team member and individually;
Ability to work under time pressure.

To apply please send your CV to the following e-mail address:
egyulazyan@aeplac.am or send/bring your CV to:

AEPLAC
28 Charents Street,
Yerevan 375025
(Attn: Mr. Enk Gyulazyan)

The deadline for submitting applications is 18:00 of 9 th July 2004.

Only short-listed candidates will be contacted. No telephone calls are accepted.

The core mandate of AEPLAC is to provide high level policy and legal advice to our Armenian partner institutions in issues related to implementation of the Partnership and Co-operation Agreement (PCA) between Armenia, the EU and its Member States.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական քաղաքականության եւ իրավական խորհրդատվության հայեվրոպական կենտրոնը (AEPLAC) կազմակերպում է կամավորների ընդունելություն՝ Հայաստան-Եվրոմիություն գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) իրականացման ազգային ծրագրի նախապատրաստմանն աջակցելու նպատակով: Կամավորները նաեւ լիաժամ զբաղակի կհանդիսանան AEPLAC-ի եւ նախարարությունների ենթակայությամբ գործող աշխատանքային խմբերի միջեւ:

Անհրաժեշտ պայմանները՝

Բուհերի շրջանավարտներ կամ ավարտական կուրսերի ուսանողներ՝ տնտեսագիտության կամ իրավագիտության մասնագիտացմամբ՝ անգլերենի իմացությամբ,
անգլերենի գերազանց իմացություն (գրավոր եւ բանավոր),
համակարգչային գերազանց իմացություն՝ MS Office եւ Internet,
անհատապես եւ որպես խմբի անդամ աշխատելու ունակություն,
ժամանակային սահմանափակումների պայմաններում աշխատելու ունակություն:

Դիմելու համար խնդրում ենք ուղարկել ձեր ինքնակենսագրությունը (CV) հետեւյալ էլ. հասցեով
egyulazyan@aeplac.am կամ ուղարկել/բերել հետեւյալ հասցեով՝
AEPLAC
Երեւան 375025
Չարենցի փ. 28
(Էրիկ Գյուլազյանի ուշադրությանը)
Դիմումները ներկայացնել մինչեւ 2004 թ., հուլիսի 9-ը, ժամը 18.00-ը:
AEPLAC-ը կտեղեկացնի միայն հաջորդ փուլ ընտրված թեկնածուներին: Հեռախոսազանգեր չեն ընդունվում:

AEPLAC-ի հիմնական խնդիրն է հայաստանյան գործընկերներին տրամադրել Հայաստանի եւ եվրոպական համայնքի ու նրա անդամ պետությունների միջեւ կնքված գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի իրագործման հետ կապված հարցերի վերաբերյալ իրավական եւ տնտեսական քաղաքականությանն առնչվող խորհրդատվություն:

до 31 августа

UNIBANK

ВКЛАД ОЛИМПИЙСКИЙ

12 месяцев

от **1000 USD**

ежемесячная капитализация или выплата процентов

% годовых

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD До 5 млн.	USD, EURO До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 - 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе

Минимальная сумма срочных депозитов
- 50.000 AMD
- 100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

Центральный офис:
г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

Филиалы в г. Ереване:

Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) **542431**

Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) **776627**

Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) **261838**

Филиалы в Армении:

Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) **40872**

Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) **33055**

ЮНИБАНК
РАЗУМНЫЕ ИНВЕСТИЦИИ
53 98 70
www.unibank.am

Request for Proposals (RFP) No. Arm 004-02 REP

1.The "Promoting Human Rights and Facilitating Public Awareness of the Public Defender's Office in Armenia" project invites the interested research organizations to submit a proposal for provision of nationwide public awareness survey on human rights services in Armenia.

2.To obtain the full set of documents enabling you to submit a proposal please contact:

Contact Person:	Karapet Beglaryan
Name of Office:	UNDP Armenia Country Office
Address:	14 Karl Libknecht St., Yerevan, 375010, Armenia
Telephone & Fax	Tel: +3741-566073, Fax: +3741-543811
E-mail:	**karapet@undp.am**

3.Your offer comprising of technical proposals and financial proposal, in separate sealed envelopes, should reach the following address no later than July 16, 2004, 17:00 Yerevan time.

Name of Office:	**UNDP Armenia Country Office**
Address:	**14 Karl Libknecht St., Yerevan, 375010, Armenia**
Subject:	**RFP (RFP) No. Arm 004-02 REP**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՍԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 2.07.2004 Գինը՝ 100 դրամ